2009, ՓԵՏՐՎԱՐ Բ, ԹԻՎ 4 (288)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Սրբոց Վարդանանց տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



Փետրվարի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց սբ պատարագ: Պատարագիչն էր Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Սահակ եպս Մաշալյանը:

Սրբազան հայրն իր քարոզում անդրադարձավ մեր ժողովրդի եւ Եկեղեցու կյանքում Ավարայրի ճակատամարտի նշանակությանը եւ նրա քրիստոնեական ընկալմանը:

Հայ Առաքելական Եկեղեցու ընկալյալ ավանդության համաձայն՝ Ս. Վարդանանց տոնը նաեւ Վեհափառ Հայրապետի անվանակոչության օրն է: Պատարագիչ Սահակ սրբազանը հոգեւորականների եւ ներկա բազում հավատացյալների անունից ջերմորեն շնորհավորեց Վեհափառ Հայրապետին՝ մաղթելով նրան քաջառողջ կյանքի երկար օրեր եւ անսասան հովվապետական գավազան: Սրբազան հայրն արձանագրեց, որ Նորին Սրբության գահակալության օրոք յուրովի վերազարթոնք են ապրում Հայ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Այնուհետեւ իջման սուրբ սեղանի առջեւ կատարվեց հայրապետական մաղթանք, որի ընթացքում ներկաներն աղոթեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսության անսասանության եւ Վեհափառ Հայրապետի կենաց արեւշատության համար:

Պատարագից հետո ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ Վարդանանց տոնին նվիրված հանդիսություն: Բացման խոսքն ասաց ճեմարանի փոխտեսուչ Դավիթ աբղ. Քարամյանը, բանախոսությամբ հանդես եկավ ճեմարանի՝ հայ ժողովրդի պատմության դասախոս Ավետիս Հարությունյանը:

Հանդիսության վերջում ներկաներին իր հայրական պատգամն ու հորդորը փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը հորդորեց ամենքին Ավարայրի հերոսամարտի ոգեկոչումով, Վարդանանց արիությամբ դիմակայել բոլոր փորձություններին եւ վտանգներին, որոնք մեր ժամանակներում ծառացած են ժողովրդի առջեւ եւ սպառնում են մեր ազգային ճշմարիտ ինքնությանը, քրիստոնեական նկարագրին ու բարոյահոգեբանական արժեհամակարգին, կարեւորեց եկեղեցականների առաքելությունը՝ քաջությամբ եւ վճռականորեն դիմագրավելու մարտահրավերներին:

Ս. Վարդանանց տոնին նվիրված շարականներով, ազգային երգերով եւ բանաստեղծություններով հանդիսությունը ծաղկեցրին ճեմարանականները:

## Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը

Փետրվարի 25-26-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը՝ ընդլայնված կազմով:

Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ժողովականներին՝ հաջողություն մաղթելով ժողովի աշխատանքներին: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետի կողմից կատարվեցին ծանուցումներ՝ նախորդ ժողովի ընթացքում կայացված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ:

Օրակարգի քննարկումից եւ հաստատումից հետո Վեհափառ Հայրապետը հրավիրեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության Կրոնական Ժողովի ատենապետ Արամ արք. Աթեշյանին՝ տեղեկություններ հաղորդելու Պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆյանի առողջական վիճակի մասին: Սրբազանը հայտնեց, որ բժիշկների ախտորոշմամբ՝ Պատրիարքի մոտ արձանագրված է հիշողության կորուստ, եւ նրա հիվանդությունն անբուժելի է: Արամ սրբազանը նաեւ տեղեկացրեց, որ Կրոնական ժողովն այսուհանդերձ հայտարարել է Պատրիարքի գկյանս լինելու հանգամանքի մասին: Կրոնական Ժողովը չի բացառել նաեւ անհրաժեշտության դեպքում աթոռակցի ընտրության հնարավորությունը:

Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց սրբազան հորը՝ ներկայացված տեղեկությունների համար եւ ընդգծեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հարգելու է պոլսահայության կամքը եւ որոշումները՝ առնված Պատրիարքության ընկալյալ կարգի եւ կանոնադրական սկզբունքների համաձայն:

*Շարունակությունը՝ էջ 2*

## Քահանայից հավաք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Փետրվարի 16-17-ը Ս. Ղեւոնդյանց տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ քահանաների ավանդական հավաքը, որին մասնակցում էին թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ եւ շուրջ 300 քահանա՝ ոչ միայն Հայաստանի, այլեւ Սփյուռքի՝ ԱՄՆ հայոց Արեւմտյան, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի, Անգլիայի, Ռումինիայի, Հարավային Ռուսաստանի, Ուկրաինայի, Արգենտինայի, Վրաստանի հայոց թեմերից, քահանաներ Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակությունից: Հավաքի ընդհանուր խորագիրն էր «Հայ Եկեղեցու առաքելությունը հայ ինքնության կերտման եւ պահպանման գործում»:



Փետրվարի 16-ին Նորին Սրբության աղոթքով բացվեց առաջին նիստը:

Ողջույնի խոսքով հոգեւոր դասին դիմեց հավաքի կազմակերպիչ, Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը: Սրբազան հայրն ընդգծեց նման հավաքների անհրաժեշտությունը՝ մտքերի եւ հոգեւոր փորձառության փոխանակման համար:

Այնուհետեւ զեկուցումներով հանդես եկան Զարեհ վրդ. Կաքաղյանը (Գուգարաց թեմ), Արտակ ավ. քհն. Սիմոնյանը (Արմավիրի թեմ), Փառեն քհն. Առաքելյանը (Շիրակի թեմ), Պսակ քհն. Մկրտչյանը (Գեղարքունիքի թեմ) եւ Վիգեն քհն. Մանուկյանը (Արագածոտնի թեմ):

Փետրվարի 17-ին՝ Ս. Ղեւոնդյանց բուն տոնին, Մայր տաճարում մատուցվեց պատարագ: Պատարագիչն էր Կոտայքի թեմի Նոր Հաճնի հոգեւոր հովիվ Արսեն քհն. Համբարձումյանը:

Այնուհետեւ թեմայի շուրջ եւս երեք զեկուցում հանձնվեց քահանայից դասի ուշադրությանը: Զեկուցողներն էին Շահե քհն. Հայրապետյանը (Արարատյան հայրապետական թեմ), Մինաս քհն. Մովսիսյանը (Արցախի թեմ) եւ Սմբատ քհն. Սարգսյանը (Կոտայքի թեմ):

Երկօրյա նիստերի արդյունքում քննարկման առարկա դարձան ժամանակակից մարտահրավերները՝ աշխարհիկացման եւ անձնապաշտության գործընթացները, արարչաստեղծ աշխարհը խեղող զանազան մեղքերն ու մոլությունները, ազգային եւ կրոնական ինքնությունների սահմանների վերացման միտումները, որոնք վտանգում են դարերով թրծված եւ քրիստոնեական սուրբ հավատով շաղախված ազգային ինքնության մեր նկարագիրը: Շեշտվեցին աստվածսիրությունն ու հայրենասիրությունը՝ իբրեւ առանցք ազգային ինքնության, որոնցից ծնունդ է առել մեր ժողովրդի ողջ արժեքային համակարգը՝ ազգային, հոգեւոր ու մշակութային բովանդակ ժառանգությունը: Ժողովականները հաստատեցին, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում հայ ինքնության կերտման ու ձեւավորման մեջ կարեւոր եւ անփոխարինելի առաքելություն ունի Հայ Առաքելական Եկեղեցին՝ իր բազմադարյա ավանդությամբ, փորձառությամբ՝ համայն աշխարհում տարածված իր կառույցների ընձեռած հնարավորություններով:

Հավաքը փակվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետը որպես մեր ինքնության հիմնաքար նկատեց Վարդանանց «Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» նշանաբանով պսակված արժեքային համակարգը, որի պահպանությանն ու զորացմանը պիտի շարունակվեն ուղղվել Հայ Եկեղեցու ջանքերը:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Միքայել սրբազանին եւ բոլոր թեմակալ առաջնորդներին՝ քահանայից հավաքի կազմակերպմանը բերած աջակցության համար:

Ապա տեղի ունեցավ շնորհաբաշխություն: Տոնի առիթով Նորին Սրբությունը տասնվեց քահանայի շնորհեց լանջախաչ կրելու իրավունք, երեք քահանայի՝ ավագության պատիվ:

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# «Պատանիների աստվածաշնչային դասընթաց» ձեռնարկի շնորհանդես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Փետրվարի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Մայր Աթոռի եւ «Վորլդ Վիժն. Հայաստան» քրիստոնեական բարեգործական կազմակերպության համատեղ հրատարակած «Պատանիների աստվածաշնչային դասընթաց» ձեռնարկի շնորհանդեսը: Ձեռնարկը հրատարակության են պատրաստել Պարույր քհն. Ավետիսյանը եւ Ղեւոնդ քհն. Մայիլյանը: Շարքը նախատեսված է կիրակնօրյա դպրոց հաճախող տարբեր տարիքի պատանիների համար, յուրաքանչյուր ձեռնարկն ընդգրկում է 36 դաս:




Հանդիսությանը ողջույնի խոսք ասաց Հայ Առաքելական Եկեղեցու ՔԴԿ-ի տնօրեն Վարդան աբղ. Նավասարդյանը: Հայր սուրբը ներկայացրեց ՔԴԿ-ի գործունեությունը՝ մասնավորապես շեշտելով քրիստոնեական դաստիարակությանը միտված ծրագրերը եւ կարեւորեց նաեւ Ս. Գիրքը մանուկների եւ պատանիների համար մատչելի եւ հետաքրքրական դարձնող շարքի հրատարակությունը, շնորհակալություն հայտնեց «Վորլդ Վիժն» կազմակերպությանը՝ համագործակցության համար:

Ապա «Վորլդ Վիժն»-ի եկեղեցու եւ կառավարության հետ կապերի բաժնի ղեկավար Կարինե Հարությունյանը, «Պատանիների աստվածաշնչային դասընթաց» ծրագրի տարածաշրջանային ղեկավար Ջիմ Մորգենրոթը եւ տեր Պարույրը ներկայացրին դասագրքերի պատմությունը, դրանց ուսուցման մեթոդաբանությունը եւ հեռանկարները: Այնուհետեւ «Վորլդ Վիժն»-ի տնօրեն Մարկ Քելլին իր երախտագիտությունը հայտնեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ վերոնշյալ ծրագրին բերած անգնահատելի օժանդակության համար: Հանդիսության վերջում գնահատանքի խոսք ասաց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Սահակ եպս Մաշալյանը:

Շնորհանդեսին ներկա էին ձեռնարկի հայերեն հրատարակության հեղինակները, Մայր Աթոռի պաշտոնեության, Կրթության եւ գիտության, Սփյուռքի նախարարություններ, Կրթության Ազգային ինստիտուտի ներկայացուցիչներ, «Վորլդ Վիժն. Հայաստան» քրիստոնեական բարեգործական կազմակերպության աշխատակիցներ:

# Սեւանի Վազգենյան դպրանոցը թողարկել է նոր ձայնասկավառակ




Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի երգչախումբը թողարկել է հոգեւոր երգերի՝ «Օրհնյալ է Աստված» խորագիրը կրող ձայնասկավառակը:

Ս կ ա վ ա ռ ա կ ի ստեղծման նախաձեռնողներն են դպրանոցի նախկին տեսուչ Մկրտիչ վրդ. Պռոշյանը եւ ներկա տեսուչ Գեւորգ աբղ. Սարոյանը: Այն թողարկվել է տեր եւ տիկին՝ Իոսիֆ եւ Մարինա Հարությունյանների (Մեծ Բրիտանիա) աջակցությամբ:

Սկավառակում ընդգրկված տասը երգերը հնչում են դպրանոցի սաների կատարմամբ՝ խմբավար Շոթա Վարդանյանի ղեկավարությամբ:

# Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի խորհրդարանի նախագահին

24 փետրվարի

Փետրվարի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Վրաստանի Խորհրդարանի նախագահ Դավիթ Բաքրաձեի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար Գեղամ Ղարիբջանյանի եւ երկու երկրների դեսպանների:



Նորին Սրբությունը գոհունակությամբ արձանագրեց, որ երկու երկրների միջեւ հարաբերությունները սերտ են, բարեկամական եւ հույս հայտնեց, որ առկա խնդիրներն իրենց լուծումը կստանան եղբայրական սիրո եւ փոխըմբռնման մթնոլորտում:

Հանդիպմանը խոսվեց Հայ Առաքելական Եկեղեցու Վիրահայոց թեմի կարգավիճակի եւ հայկական եկեղեցիների վերադարձման խնդրի, ինչպես նաեւ վիրահայությանը հուզող այլ հարցերի մասին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը, Եկեղեցի-պետություն հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Մեսրոպ աբղ. Պարսամյանը:

# Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց ...

Սկիզբը՝ էջ 1

Ապա Նորին Սրբությունը հրավիրեց ներկաներին՝ աղոթելու եւ հայցելու Աստծո օրհնությունն ու զորակցությունը Պատրիարք սրբազանին:

Այնուհետեւ քննության առնվեցին թեմական եւ ծխական կանոնադրությունների ուղենիշերի վերամշակված նախագծերը, որոնց մասին զեկույցով հանդես եկավ համապատասխան հանձնախմբի նախագահ Եզնիկ արք. Պետրոսյանը: Սրբազան հայրը տեղեկացրեց, որ հանձնախմբում հանգամանորեն քննարկվել են թեմերից ստացված առաջարկությունները, որոնց արդյունքում ձեւավորվել է լրամշակված տարբերակ: ԳՀԽ-ն գոհունակություն հայտնեց կատարված աշխատանքների համար եւ հետքննարկման համապատասխան փոփոխություններով հաստատեց թեմական եւ ծխական կանոնադրությունների նախագծերի լրամշակված տարբերակները: Առաջիկայում հիշյալ փաստաթղթերը ներկացվելու են թեմական-ներկայացուցչական ժողովի քննարկմանը:



Կաթոլիկ-Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների կողմից ստեղծված համատեղ աստվածաբանական հանձնախմբի 1-6 հանդիպումների արդյունքների մասին զեկուցեց Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Եզնիկ արք. Պետրոսյանը: Սրբազանը տեղեկացրեց, որ ստեղծվել է «եկեղեցու էությունը, կառուցվածքը եւ առաքելությունը» վերտառությամբ փաստաթուղթ: Փաստաթուղթը Հայ Եկեղեցու աստվածաբանական տեսանկյունից քննելու եւ ԳՀԽ ներկայացնելու համար ստեղծվեց համապատասխան հանձնախումբ:

Նիստի ժամանակ ներկայացվեց նաեւ Մայր Աթոռի տարեկան գործունեության ֆինանսական տեղեկագիրը:

Օրակարգում ընդգրկված էին նաեւ ներեկեղեցական եւ միջեկեղեցական կյանքին առնչվող հարցեր:

*Լրատվական նյութերը՝*
*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*

# ՀՀ նախագահի այցը Գուգարաց թեմ



Փետրվարի 19-ին Լոռու մարզ պաշտոնական այցի շրջանակներում ՀՀ նախագահ տիար Սերժ Սարգսյանն այցելեց Գուգարաց թեմի առաջնորդանիստ Սբ Գրիգոր Նարեկացի եկեղեցի: Սրբոց Վարդանանց տոնին նվիրված պատարագի ավարտին՝ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպս Չուլջյանի բարիգալստյան խոսքից հետո, նախագահը մոմ վառեց եկեղեցում եւ առանձնացավ՝ աղոթելու: Ապա նախագահի շքախումբը՝ առաջնորդի ուղեկցությամբ, մասնակցեց եկեղեցու դահլիճում տեղի ունեցող Վարդանանց տոնակատարությանը: Միջոցառմանը Վարդանանց նվիրված շարականների, խմբերգերի եւ մեներգերի կատարմամբ ներկաներին հիացմունք պատճառեց Սբ Գր. Նարեկացի եկեղեցու դպրաց դասը:

Ապա ՀՀ նախագահը, թեմի առաջնորդը, մարզային եւ քաղաքային իշխանության ներկայացուցիչները մասնակցեցին Վանաձորի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անունը կրող թիվ 1 դպրոցի բակում տեղադրված՝ Վեհափառ Հայրապետի կիսանդրու բացման արարողությանը:

*Դիվան Գուգարաց թեմի*

# Վարդանանց տոնն Օշականում

Փետրվարի 18-ին, Վարդանանց տոնի առիթով, Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց դպրատանը տեղի ունեցավ մշակութային ցերեկույթ: Ներկա գտնվող երեխաների համար «Ազգ, մշակույթ, եկեղեցի» խորագրով բանախոսություններով հանդես եկան երգիչ Արսեն Գրիգորյանը եւ երգչուհի Լեյլա Սարիբեկյանը, որոնց խոսքն ուղեկցվում էր ժողովրդական երգերի կատարմամբ, ինչն ավելի ազդեցիկ էր դարձնում դրանց իմաստը:

Մի խումբ երեխաներ իրենց գրած երգը նվիրեցին Լեյլա Սարիբեկյանին:

*Դիվան Արագածոտնի թեմի*

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԿՈՍՏԱՆԴԻՆ Զ ՎԱՀԿԱՑԻ

## (1430-1439)

Պողոս կաթողիկոսի թունավորմամբ կիլիկեցիք կրկին վերահաստատվեցին հայրապետանոցում: Կաթողիկոսական աթոռ բարձրացավ նրանց գլխավորներից Կոստանդինը, որը բնիկ Վահկա բերդից էր, հարուստ, խորամանկ, խարդավանքների փորձառու վարպետ, որը, անտարակույս կազմակերպել էր դավադրությունը Պողոս կաթողիկոսի դեմ: Նա իր գործունեությամբ բավականին լատինամոլ էր, կապեր էր հաստատել Ֆլորենցիայի ժողովի հետ, թեկուզ ձեռնարկողն ինքը չէր եղել: Գուցե եւ աղթարմայության նախանձախնդիր չէր, բայց որոշակիորեն համակիր էր: Նա մտերմություն ուներ Մկրտիչ Նաղաշ վարդապետի հետ, հարգում էր նրան, ուստի հայադավանությունից դեռ լրիվ չէր հեռացել: Այսպես թե անպես, Մկրտիչ Նաղաշը բոլորովին հեռու էր աղթարմայությունից: Նա Բաղեշին մոտակա Պոռ գյուղից էր, մեծատուն Առաքել քահանայի որդին, վաղամեռիկ Հովհաննես քահանայի եւ տանուտեր Աբգարի եղբայրը: Ամուսնացած էր, սակայն կինը մահացել էր ծննդաբերության ժամանակ, որից հետո ինքը կրոնավոր էր դարձել՝ շարունակելով զբաղվել նկարչությամբ եւ ճարտարապետությամբ: Հայտնի չէ, թե ում է աշակերտել, սակայն 1418-ին եղել է Պոռի Սբ Անանիա (հետագայում՝ Սբ Հովհաննես) վանքի սարկավագ: Ձեռնադրվել է վարդապետ Ամիդում, իսկ 1430-ին կրկին Ամիդում ձեռնադրվել է եպիսկոպոս՝ Կոստանդին Վահկացու կողմից: Նա շատ ազդեցիկ հոգեւորական էր Միջագետքում, ակ-կոյունլու Օսմանի սիրելին էր եւ նրանից ստացել էր բազմաթիվ արտոնություններ. վերանորոգելու հայկական եկեղեցիները, թույլատրելու հոգեւորականներին ապահարկ լինել եւ ազատելու գերիներին ու նեղվածներին: Նա 1433-ին կառուցել է Արկնիքի կամ Արղնիքի բարձրահայաց վանքը, 1439-ին՝ Դիարբեքիրի Սբ Թեոդորոս կաթողիկեն:



Հակառակ Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսի շինարար գործունեությանը, Սսի հայրապետանոցը Կոստանդին Վահկացու օրոք պարզապես քայքայվում էր: Հայոց Առաքելական Եկեղեցու ջատագով Արեւելյան եպիսկոպոսները որոշեցին այդ կացությունը շտկել՝ կաթողիկոսական աթոռը Սբ Էջմիածին տեղափոխելով: Վերջինս էլ շատ գոհացուցիչ պայմաններում չէր, սակայն զերծ էր աղթարմայության վարակից: Պողոս կաթողիկոսի թունավորումը եւ Կոստանդինի հովվապետելը սառը ցնցուղի տպավորություն էին թողել Արեւելյան եպիսկոպոսների վրա:

Ահավոր էր վիճակը բուն Հայաստանում կարա-կոյունլու Իսքենդերի իշխանության օրոք: Վանի շրջանում կառավարիչ էր նշանակված նրա Արալի որդին, որի ապօրինություններն այնքան անցան ամեն չափ ու սահման, որ անգամ արդարադատությունից շատ հեռու Իսքենդերը նրան ետ կանչեց: Սակայն նա հորը ներկայանալու փոխարեն ապավինեց Շամախիի խան Խալիլուլլահին, որը նրան ուղարկեց Շահռուխ խանի մոտ: Իսքենդերը, որ խիստ զայրացած էր այդ պատճառով, 1434-ին հարձակվեց Խալիլուլլահի իշխանության վրա, 15 օր ավերեց այն, անցավ Դարբանդի կողմերը՝ ոչնչացնելով լեռնականներին ու դաշտաբնակներին: Մեկ ամբողջ տարի տեւեցին նրա խժդժությունններն այստեղ: Նա մեծ ավարով եւ սպանվածների գլուխների բեռներով 1435 թվին վերադարձավ Սյունիք, որտեղ Հակոբ Շամախեցի քահանան կարողացավ մեծ դժվարությամբ քրիստոնյա գերիներին ազատել: Իր հերթին Շահռուխն էլ մեծ բանակով պաշարեց Սուլթանիան, հետո շարժվեց Երնջակ, որտեղ Իսքենդերի մայրը՝ Խանումը, եւ եղբայրը՝ Ջհանը, Շահռուխին խոստացան սպանել Իսքենդերին: Վերջինս, իմանալով այդ մասին, փախավ Կոգովիտ գավառի Արծափ գյուղը, այնտեղից արշավեց Կարին, որտեղ բախվեց ակ-կոյունլու Օսմանի հետ, ջախջախեց նրա զորքերը եւ սպանեց նրան: Հետո նա շարժվում է Ակշեհիր ու Թոքաթ: Նրան հետապնդում էր Շահռուխի որդի Ջոնգան, որը նրան չհասավ, իսկ Շահռուխը շահ ճանաչեց Ջհանին, որն այնուհետեւ հայտնի է Ջհանշահ անունով, քանի որ վերջինս ճանաչել էր թաթար խանի գերիշխանությունը:

1436-ին Իսքենդերն սկսեց ասպատակել Փոքր Հայքի տարածքները Սեբաստիայի շրջանում, որտեղ շատ հայ տղամարդկանց ահավոր տանջանքների ենթարկեց, իսկ կանանց ու երեխաներին գերի տարավ: Նա մեծ փրկագին վերցրեց Տիվրիկից, ավերածության ենթարկեց Խարբերդը, գերեվարեց Դերջանի բնակչությանը ցուրտ ձմեռով եւ երբ ցրտահարվածների մասին իմանում էր, ծիծաղելով ասում էր, որ դա Աստված է արել, եւ ինքը մեղք չունի: Դրա հետեւանքով մեծ թվով մարդիկ մահացան: 1437-ին հարձակվեց Ջհանշահի վրա, սակայն յուրայիններից լքվեց, փախավ Երնջակի բերդը, որտեղ նրա մայրը՝ Խանումը, եւ Շահաբաթ որդին եւ 10 զորեղ մարտիկներ նրան սպանեցին քնած ժամանակ: Նրա գլուխը տարան Ջհանշահին, որի ջանքերով կյանքը հարաբերականորեն խաղաղվեց: Այս դեպքերի պատճառով հայրապետանոցի տեղափոխումը Սբ Էջմիածին որոշ ժամանակով ձգձգվեց:



Հիշյալ դժնդակ ժամանակներում սպառվեցին Օրբելյանները: Իշխանական այդ տոհմից մնացել էր միայն Պեշքենը կամ Բեղքենը, որը Սմբատ Օրբելյանի որդին էր: Նա կեղծուրացություն էր ընդունել, հետո՝ դարձի եկել: Բեղքենը գտնվում էր վրաց Ալեքսան թագավորի գերիշխանության ներքո, որը հայերի նկատմամբ բարյացակամ չէր եւ վախենում էր, որ նրանք կարող են համախմբվել Բեղքենի շուրջը. Բեղքենն իրեն էր վերադարձրել նաեւ Սյունիքը: Վրաց թագավորը որոշում է սպանել Բեղքենին եւ դրա համար վարձում է Ամնադին անունով մի հայի, որը պետք է նրան թունավորեր: Բեղքենը դա զգում է, նույնիսկ հակաթույն է խմում, սակայն, այնուամենայնիվ, մահանում է: Նրա սպանության գործում, թերեւս, իր դերակատարությունն է ունեցել նրա ոչ քաղկեդոնական լինելը: Բեղքենի մահով, փաստորեն, Օրբելյան իշխանական ընտանիքն սպառվեց: Լոռի ամրոցը, որ նրանց էր տրվել նախկինում, ետ վերցվեց: Բեղքենի եղբայր Շահին առանձին ջանքեր չգործադրեց՝ տիրելու իրենց հայրենական Սյունյաց տիրույթներին, իսկ նրա որդին մահացավ տասը տարեկան հասակում՝ 1438-ին: Սակայն Բեղքենի մտերիմները վրեժ լուծեցին Ամնադինից՝ անդամահատելով նրան:

Վրաց Ալեքսան թագավորը 1439-ին հիվանդացավ, իսկ 1440-ին Ջհանշահն արշավեց Վրաց թագավորության վրա եւ պաշարեց Շամշուլտե քաղաքը: Նա մեծ թվով գերիներ տարավ, որոնց ուղարկեց Խորասանի, Մորի, Բաղդադի եւ Տաճկաստանի կողմերը: Բուն Հայաստանում բնակչությունն այնքան էր աղքատացել, որ չկարողացան գերիներին ետ գնել: Վրաց թագավորությունը գրավվեց, որով վերջին քրիստոնեական պետությունն էլ տարածաշրջանում ընկավ: Ջհանշահը հարկերը խստացրեց քրիստոնյաների նկատմամբ, սակայն պատերազմական խռովությունները վերացան: Արեւելյան Հայաստանի եւ շրջակա երկրամասերի վրա կառավարիչ նշանակվեց Հասան-Ալիի որդին, որն իր աթոռանիստը դարձրեց Նախիջեւանը: Նրան էին ենթարկվում Վանի, Երեւանի, Տփղիսի եւ այլ երկրամասերի բեյերը կամ բեկերը: Երեւանում կառավարիչ էր նշանակված Յաղուբ բեյը, որի անվան հետ է կապվում կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Սբ Էջմիածին:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր***

# ՎԱՍՆ ՀԱՒԱՏՈՅ, ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

> «Այս հավատից մեզ չի կարող խախտել ոչ ոք եւ ոչինչ՝ ո՛չ հրեշտակները եւ ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը եւ ո՛չ հուրը, ո՛չ ջուրը եւ ո՛չ էլ որեւէ այլ դառը հարված»
>
> *(սբ Վարդան Զորավար)*

Հայոց Եկեղեցու ամենից ազգային ու սիրելի տոներից է Վարդան Մամիկոնյանի եւ 1036 քաջ զինվորների նահատակությունը, որը հիշատակվում է ամեն տարի՝ փետրվար ամսին: Հայոց պատմության այս ժամանակաշրջանի դեպքերը մանրամասն շարադրել են Ե դարի ականատես-պատմիչ Եղիշե վարդապետը, որը Սահակ Պարթեւի ու Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից էր, եւ Ղազար Փարպեցին:

Ե դարի կեսերին Հայաստանի զգալի մասը գտնվում էր Պարսկաստանի տիրապետության տակ, եւ երկրում կառավարում էին մարզպանները: Հայերի քրիստոնեություն ընդունելը եւ կրոնով հռոմեական կայսրությանը հարելը Պարսից պետությանը ձեռնտու չէին: Ուստի Ե դարի առաջին կեսից քրիստոնեության դեմ հալածանքները կրկնապատկվեցին: Սասանյան պետությունը հայերից պահանջում էր հավատափոխ լինել, այսինքն՝ ընդունել զրադաշտական կրոնը: Նախարարներից ոմանք նրանց առաջարկին տեղի տվեցին ու կրոնաթող եղան: Ստեղծվեցին պարսկամոլների եւ հունամոլների կուսակցություններ:

Պարսից Հազկերտ արքան մի հրովարտակ է ուղարկում հայ նախարարներին՝ առաջարկելով քրիստոնեության փոխարեն ընդունել պարսից զրադաշտական կրոնը: Հայ նախարարները, եպիսկոպոսներն ու բազմաթիվ այլ բարձրաստիճան պաշտոնյաներ հավաքվեցին թագավորանիստ Արտաշատ քաղաքում եւ ազգային-եկեղեցական ժողովում միաբան մերժեցին կրոնափոխության առաջարկը: Զայրացած Հազկերտը բոլոր նախարարներին կանչում է Տիզբոն ու կալանավորում: Այնժամ հայ նախարարները դիմում են կեղծ ուրացության՝ հայրենիք վերադառնալու եւ պաշտպանողական միջոցներ ձեռնարկելու համար: Ինչպես վկայում է Եղիշեն, մոգերի ուղեկցությամբ Հայաստան վերադառնալով՝ նրանք հանդիպում են յուրայինների բուռն թշնամական վերաբերմունքին ու ստիպված են լինում պարզելու ապստամբության դրոշը: Այդ վճռորոշ պահին արդեն իսկական ուրացության է դիմում Հայաստանի մարզպան Վասակ Սյունին՝ իր համախոհներով, որոնց հաջողվում է ապստամբների ուժերը ջլատել՝ նրանցից զատելով վրացիներին, աղվաններին եւ հունահայերին: Հազկերտը մի հսկայական բանակով պատրաստվում է ճնշելու ապստամբությունը: Իսկ Հայոց սահմանում հավաքվում է շուրջ 66000 ծեր ու ջահել, աշխարհական ու հոգեւորական հայորդիներից կազմված մի զորագունդ: Պատերազմի նախօրեին գալիս են զորապետ Վարդան Մամիկոնյանը, Հովսեփ կաթողիկոսը, Ղեւոնդ երեցը եւ մյուս քահանաները, քանզի այդ պատերազմը «համարում էին ոչ թե մարմնական, այլ հոգեւոր՝ ցանկանալով իրենք էլ քաջ զինվորներին մահակից լինել»:



Ժողովուրդը խռովահույզ մտքերի մեջ էր. լուսաբացին դուրս էր գալու երիցս հզոր թշնամու դեմ ու միայն մահն էր առջեւում նշմարում: Այս տրամադրությունը շուտով տարածվեց ամբողջ զորաբանակով մեկ: Բոլորն ակամա քաջալերանքի ու ոգեւորության էին սպասում: Ուստի քաջ սպարապետն սկսեց իր ոգեւորիչ խոսքն ուղղել զորքին՝ ասելով, թե այս կռիվը մեծագույնն է լինելու մյուս կռիվներից, քանի որ այն «ոչ թե մահկանացու, այլ անմահ Թագավորի համար է լինելու: Ուրեմն եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ուրախ պատվով ընդունենք. միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք, քանզի մեր զորավարը ոչ թե մարդն է, այլ Տերը՝ բոլոր մարտիրոսների զորագլուխը»:

Այս խոսքերի ազդեցությամբ էին տարված հավաքվածները, երբ առաջ եկավ Ղեւոնդ երեցը, եւ ինքն էլ իր հերթին խոսեց զորքի առջեւ. «Քրիստոս մահվամբ Իր անձը զոհեց մեր մեղքերի համար ու մեզ արդարացրեց չափազանց ծանր պարտությունից: Ուրեմն մենք էլ պարտավոր ենք մեր անձը զոհել Նրա անմահ զորության համար, քանզի Ում հետ մեռնենք, Նրա հետ էլ կկենդանանանք»: Ս. Ղեւոնդն իր քաջալերանքի խոսքը մարդկանց ուղղելուց հետո սուրբ սեղան կանգնեցրեց, ավազան պատրաստեց, ամբողջ գիշեր բոլոր չմկրտվածներին մկրտեց, մատուցեց սուրբ եւ անմահ պատարագ, ու ողջ զորքը հաղորդվեց:

Այսպես ավարտին մոտեցավ հաղորդությամբ, մկրտությամբ ու աղոթքներով սրբացած խորհրդավոր գիշերը, եւ բացվեց այն առավոտը, որ պետք է լուծեր հայերի լինելության հարցը: Իսկ լուսադեմին զորավար Վարդան Մամիկոնյանը ու նրա ողջ գունդը «թեեւ թվով նրանցից շատ ավելի քիչ էին, բայց ամենեւին չվախեցան մեծ բազմությունից, այլ բոլորը միասին իրենց ձեռքերը դեպի երկինք բարձրացրին» եւ իմացյալ մահվան գնացին: Ավարայրի դաշտում՝ Տղմուտ գետի ափին, կռապաշտների հետ այս ոգով բախվեց իրենց «կյանքը մահ եւ մահը կյանք» համարող մարդկանց բազմությունը:

Ավարայրի ճակատամարտը հայ ժողովրդի համար ունեցավ թե՛ ազգային եւ թե՛ կրոնական մեծ նշանակություն, որովհետեւ եթե այս պատերազմում հայերը բարոյական հաղթանակ չտանեին, ապա կկորցնեին քրիստոնեությունն ու ազգային պատկանելությունը եւ այդժամ կձուլվեին պարսիկների հետ: Այդ պատերազմին, սակայն, հաջորդեց քրիստոնեության հաղթանակը:

Հայ Եկեղեցին Ավարայրի դաշտում նահատակված 1036 վկաներին դասել է սրբերի կարգը եւ ամեն տարի մեծ շուքով տոնում է «Սրբոց Վարդանանց» հիշատակը: Այս տարի այն նշվում է փետրվարի 19-ին: Այդ օրը նաեւ ազգիս Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնն է, եւ սբ պատարագի ավարտին կատարվում է Հայրապետական մաղթանք:

*Արմեն սրկ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

# ՈՒԽՏԱՆԵՍ

## (920/930 - 986)



*Սկիզբը՝ թիվ 3*

**Բուն պատմությունն** սկսվում է Բ գլխից, որը վերնագրված է «Թագաւորների մասին՝ սկսած Ադամից»: «Նախաստեղծ Ադամին» նա համարում է երկրի վրա առաջին թագավորը: Հաջորդում է Ադամի տոհմաբանությունն ըստ Աստվածաշունչի՝ Ադամ-Սեթ-Ենովս-Կայնան-Մաղաղիել-Արեթ-Ենովք-Մաթուսաղա-Ղամեք-Նոյ: Ադամից Նոյ՝ նախահայրերի շարքը տասը հոգի է, իսկ տարիների քանակը՝ 2000:

Նոյը 500 տարեկանում սերում է Սեմին, Քամին ու Հաբեթին: «Եվ վեցհարիւրերորդ տարում եկաւ ջրհեղեղը, իսկ Նոյը հարիւր տարի առաջ [արդեն] պատրաստել էր տապանը իր տան փրկութեան համար»,- գրում է պատմիչը եւ ավելացնում, որ Նոյի որդիներից ու նրա որդիների որդիներից սերվեցին առանձին ազգեր:

Ադամից հետո Նոյը երկրի վրա դառնում է երկրորդ թագավորը, ջրհեղեղից հետո ապրում 350 տարի եւ 950 տարեկանում մեռնում:

Քամի սերունդներից Նեբրովթը հիմնադրում է իր թագավորությունը՝ տիրելով Բաբելոնից մինչեւ Նինվե:

Հաբեթի սերունդներից Հայկը հիմնում է հայոց թագավորությունը, որը կոչվում է իր անունով:

Իսկ Սեմի սերունդներից սերվում է Աբրահամը, որը Ադամից հետո 21-րդն էր, իսկ տարիների քանակը՝ 3000:

Ուխտանեսը տալիս է Հաբեթի տոհմաբանությունը, որ ճշտել էր Խորենացին, այն տարբերությամբ, որ Խորենացու գրքում Գամեր է, իսկ այստեղ՝ Գոմեր: Հայերից բացի՝ Հաբեթից սերվում են նաեւ այլ ազգեր՝ կետացիներ, ռոդացիներ, եւ յուրաքանչյուրն իր լեզվով մեկնում իր երկիրը: Այնուհետեւ պատմիչը ներկայացնում է Սեմի, Քամի եւ Հաբեթի տարածքային սահմաններն իրենց կղզիներով, լեռներով, ծովերով ու գետերով՝ այս դեպքում օգտվելով Փիլոն Թրակացուց: Պատմիչն ասում է, որ Հաբեթի սերունդներից, բացի Հայկից, Արամից եւ Տիգրանից, որեւէ մեկի «կողմից կատարուած պատերազմական սխրագործութիւնների մասին որեւէ տեղ չգտանք» (I, ԺԴ, էջ 39) եւ անցնում է Հայկին ու նրա սերունդներին: Պատմիչը սիրով է պատմում մեր այս նախնիների մասին, որ հիմնադրեցին, ամրապնդեցին եւ ընդարձակեցին մեր հայրենիքի սահմանները: Հայկը տապալում է Բելին, Արամը ճակատից պատին է մեխում մեդացիների առաջնորդ Մադեսին, հաղթում Պայապիս Քաաղեային եւ տարածում մեր հայրենիքի սահմաններն այնքան, որ մեզ Մեծ Հայք են կոչում:

Զուգահեռ նա ներկայացնում է նաեւ պարսից, հրեից եւ հունաց պատմության դրվագները: Գլուխներին կից հաջորդաբար տրվում է «Կայսրեր» բաժինը:

Պարույրին համարում է առաջին հայկազունի թագավոր, որից հետո գահակալում է Հրաչյան. «Սա Հրաչեայ է կոչւում առաւել պայծառատեսք եւ բոցավառ աչքեր ունեցող լինելու համար» (I, ԻԴ, էջ 47): Այս կերպարն իր անվան բացատրությամբ նմանվում է Վահագնի կերպարին: Հրաչյայից հետո թագավորում է Տիգրան Առաջինը: Խորենացու նման Ուխտանեսը եւս Տիգրան Երկրորդին (Մեծին) շփոթում է Տիգրան Առաջինի հետ եւ պատմում Տիգրանի, Աժդահակի եւ Տիգրանուհու զրույցը:

Հաջորդում են հայոց Արշակունի արքաները, իսկ հայոց նախարարների գահնամակը, այսինքն՝ աստիճանակարգի (գահերի, նստատեղերի) վավերացված ցուցակը պարթեւ Արշակ Մեծի դիվանից նրա եղբայրը Վաղարշակին է բերում Մարեբա Կատինյան (Ուխտանեսի գրքում անվան այս ձեւն է, Խորենացու մոտ՝ Մարաբաս Կատինա, նաեւ՝ Մարիբա Կատինյա):

Ուխտանեսի պատմությունն առաջ է ընթանում արքայատոհմերի եւ ժամանակների շփոթով՝ Տիգրան Երկրորդը (Մեծը) հանդես է գալիս Արշակունի թագավորների արանքում: Սրա որդին եւ հաջորդը, ըստ Ուխտանեսի, Արտավազդն է, որին ներկայացնում է իբրեւ ուտել-խմելով, որսորդությամբ զբաղված, իմաստությանն ու քաջությանն անտես եւ սաստիկ որկրամոլ, ծույլ ու անբանի մեկը: Սա այն Արտավազդն է, որին Անտոնիոսը «բռնելով պարգեւ տուեց Կղեոպատրային, բայց չգիտեմ, թե ինչ ձեւով տեղի ունեցաւ նրա մահը» (I, L, էջ 54): Հայտնի է, որ այս Արտավազդը գլխատվել է Ք. ծ. ա. 31 թ. սեպտեմբերի 2-ին:

Ըստ Ղուկասի Ավետարանի (Բ 1)՝ հիշվում է, որ Օկտավիանոս Օգոստոսի «օրոք ամբողջ աշխարհում մարդահամար եղաւ, որի [ժամանակ] էլ Յովսէփը Մարիամի հետ մարդահամարից փախչելով՝ [Մարիամը] Բեթղեհեմում ծնեց մեր Փրկիչին»: Ադամից մինչեւ Քրիստոս, ըստ Ուխտանեսի, կազմում է 5500 տարի: Ըստ հրեաների՝ 4000, ըստ հույն Եպիփան Կիպրացու՝ 5500, ըստ Քննիկոնի, որն Ուխտանեսի գրքում համընկնում է Փիլոն Թրակացու «Քրոնիկոնի բազմավեպ պատմությանը»՝ 5192:

Տիբերիոսի գահակալության տարիներով նշում է՝ սրա 15-րդ տարում Հովհաննես Մկրտիչը Հորդանան գետում մկրտեց Հիսուս Քրիստոսին, 16-րդ տարում Հովհաննես Մկրտիչը գլխատվեց, 17-րդ տարում Քրիստոսին հրեաները խաչեցին. «Եւ Տիբերիոսը, տեղեկանալով Քրիստոսի սքանչելագործ հրաշքների մասին, իր մոտ կանչեց Պիղատոսին: Իսկ նա, տանջանքներից երկյուղելով, մինչդեռ Օվկիանոսում [Միջերկրական ծովում] նաւարկում էին, իր անձի ներքին պայքարի մեջ լինելով, իրեն նետեց ծովը» (I, L, էջ 55):

Այս Տիբերիոսի ժամանակ հայոց Աբգար թագավորը, որ Ուռհայում էր, նամակ է գրում Փրկչին, որպեսզի վերջինս գա եւ բուժի իրեն: Բերվում է նամակը՝ ըստ Խորենացու: Հաջորդում է Փրկչի հրամանով Թովմասի (առաքյալ) պատասխանը. «Երանի է նրան, ով կը հաւատայ Ինձ, երբ չի տեսել Ննձ: Որովհետեւ Իմ մասին այսպես է գրուած, թէ ովքեր Ինձ տեսնեն, չեն հաւատալու Ինձ, իսկ ովքեր չեն տեսնի Ինձ, նրանք կը հաւատան եւ կ'ապրեն» (I, LԴ, էջ 57): Ըստ Ուխտանեսի՝ այդ ժամանակ Ուռհա (Եդեսիա) են բերել Քրիստոսի «գեղանկար պատկերը», որը մինչեւ հիմա կա:

*Շարունակությունը՝ էջ 7*

# «ԱՍՏՎԱԾ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

«Երկրի վրա Աստծո մարմնավորումը այդ ըմբռնման կենդանի խորհրդանիշն է»,- գրում է Էդմոն Աթայանը: Այդ ըմբռնումը ժամանակակից գրական արեւելահայերենում եւ արեւմտահայերենում արտահայտվում է «Աստված» բառով, որն ավանդված է հնդեվրոպական նախալեզվից, պատկանում է հայերենի բառապաշարի բնիկ շերտին եւ հատուկ է հայերենի բոլոր բարբառներին:

Է. Աթայանի փիլիսոփայական համակարգում Աստված բնորոշվում է որպես ազատության խորհրդանշան: Համաձայն նրա տեսության՝ մարդ անհատի ազատությունը կվերաճի բուն ազատության, եթե նրա հոգու մեջ խոսի «աստվածային Բանը կամ նույնն է Խիղճը»: «Այս դեպքում միակ արդարացված ձգտումը կլինի այն, որ մարդկային ազատությունը եւ ամեն մարդկայինը վերածվեն բուն ազատության եւ մնացյալ ողջ գերմարդկայինի նվաճման բնական պատվանդան-հենադաշտի»,- գրում է նա (Է. Աթայան, Հոգի եւ ազատություն, էջ 137):

Բարբառային բառապաշարն ուսումնասիրելիս նկատում ենք, որ մեզ շրջապատող իրերի ու երեւույթների գերակշիռ մասն ունի մեկից ավելի բառային զուգաբանություններ: *Աստված* ըմբռնումը դիտարկելիս պարզվում է, որ Աստծո հանդեպ ունեցած վերապահական վերաբերմունքի պատճառով բարբառախոսները հակված չեն այն տարբեր բառային նշաններով արտահայտելու: Ազատության խորհրդանշանը եւ առեղծվածային գոյը մատնանշելու համար բարբառներում հիմնականում գործածվում են «աստված» գրական փոխառության հնչյունական տարբերակները՝ տվյալ բարբառին բնորոշ հնչյունափոխությամբ ու շեշտադրությամբ. օրինակ՝ *ա'ստված* (Կարճեւան, Մեղրի), *աստըված* (Ղարաբաղ, Բիթլիս), *ա°ստըված* (Բայազետ, Փերիա, Հաբուսի), *աս(տ)ված* (Նիկոմեդիա), *աստըված* (Արծափ, Ալաշկերտ), *աստված* (Խոտրջուր, Խութ), *ա'ստուծ* (Տփխիս), *ա'ստօծ* (Երեւան), *աստված* (Համշեն, Տիգրանակերտ), *աստ'ված* (Լեհահայք), *ըստված* (Սասուն), *ասված* (Ախալցխա, Երզնկա, Կռզեն, Մարաղա), *ասված* (Ասլանբեգ, Խարբերդ, Սուչավա, Ակն), *ասպած* (Վան), *ա'ստուծ* (Գորիս), *աստոծ* (Կուրթան), *աստօծ* (Շամախի), *աստոծ* (Լոռի), *աստօծ* (Կողբ), *ասվօծ* (Հաջըն), *ասբած* (Ակն), *ասբ'օծ* (Զեյթուն) եւ այլն:

Հայերենի մի շարք բարբառներում (Երզնկա, Վան, Մոկս, Ոզիմ, Ագուլիս, Ջուղա եւ այլն) պահպանվում է *Աստված* բառի գրական լեզվական համարժեքը:

Միեւնույն լեզվական նշանի, այսինքն՝ գրական հայերենի *Աստված* բառով եւ դրա հնչյունական տարբերակների կիրառությամբ դրսեւորվում է բարբառախոսների ակնածական վերաբերմունքը *Ազատություն-Աստված* գաղափարի հանդեպ:

*Աստված* հասկացությունը ժողովրդական խոսքում հաճախ ունի այնպիսի տարբերակներ, որոնք առավել ցայտուն են արտահայտում անհատի ազատություն//անազատությունը՝ միաժամանակ ամփոփելով ու խտացնելով քրիստոնեական կրոնի առանձնահատկությունները: Է. Աթայանն այդ առանձնահատկությունը բնորոշում է այսպես. «Քրիստոնեության առանձնահատկությունը, նրա տարբերությունն այլ կրոններից, դրանց թվում բուդդայականությունից, ոչ թե սոսկ գթասրտությունն է, այլ նախեւառաջ անհատականության զորության ու ծաղկման հաստատումը. նրա իդեալը հենց ճշմարտության, գեղեցկության, բարու մարտիկն է՝ ազատորեն նպատակամուղ ինքնակերտ անհատը» (նույն տեղում, էջ 214): Այս գաղափարով առաջնորդվելով՝ իրոք նկատում ենք, որ բարբառային ոչ մի անվանման հիմքում ընկած չէ գթասրտությունն ու ներողամտությունը: Հոգու խորքում իր ես-ն ամեն ինչից գերակայող անհատը Ազատություն-Աստծուն ընդունում է ոչ միայն որպես իր տերն ու դատավորը, այլեւ երկնքի եւ երկրի, ամեն ստեղծվածի եւ ստեղծվելիքի տերը եւ ոչ միայն գթառատ ու



ներող իրողություն: Բարբառախոս անհատն այդ զգացումն արտահայտում է հետեւյալ բառային ու բառակապակցական միավորներով. *Վէրնէրի տէր* (Արարատյան), այսինքն՝ բոլոր վերնայինների, երկնային մարմինների ու երկնքի տեր, *Իյգինք եւ իյգիյ ընձեղանի* (Հաջըն), այսինքն՝ երկինք եւ երկիր ստեղծող, բոլոր երկնայինների եւ երկրայինների արարիչ, *Դ'ադավէր* (Սեբաստիա), *Է'յնավօր դադավօր* (Պոլիս), այսինքն՝ արդարություն հաստատող, չարն ու բարին իրարից զատող, դրախտայինն ու դժոխայինը սահմանող: Պոլսի բարբառում *է* ձայնավորը ընդգծված երկարացումով է արտահայտվում, որը շեշտում է այդ իշխանության հզորությունը:

Բարբառային մտածողությամբ երկնային Տեր եւ դատավոր Աստված նաեւ անսահման ու անեզր է: Անեզր ու անսահման է նաեւ ազատությունը, որին մշտապես ձգտում է մարդ անհատը: Ազատություն-Աստծուն վանեցին բնորոշում է *անեզական, անխուն* (< անհուն, անսահման) հատկանիշներով, իսկ բուլանըխցին՝ *անահուն* (< անհուն) ածականով: Ի դեպ, այս որոշիչներով բնորոշելի է միայն երկնային Տերը:

Ժողովրդական լեզվամտածողությամբ *Աստված* հասկացությունը եւ աստվածային զորությունը համադրվում են երկնքի, անսահմանի եւ երկնագույն, կապույտ գունանունների հետ. օրինակ՝ *Յէրէ կ'ա''պու''տ* (Ղափան), *Թա''ռ Աստված* (Ղարաբաղ) եւ այլն: Նշված օրինակները եւս անեզրության ու ազատության գաղափար են արտահայտում: Ղարաբաղի Սղնախ գյուղի խոսվածքում Աստված ունի *Եռռնավոր* անվանումը: Նշված օրինակի կրկնակ *ռ*-երը նույնպես աստվածային իշխանություն մեծությունն են արտահայտում:

Աստվածային գերակայությունն են արտահայտում նաեւ *Ասված բաբա* (Տիգրանակերտ), *Ասվօծ բաբիգ* (Հաջըն) արտահայտությունները, որոնց մեջ շեշտվում է Սուրբ Երրորդության բաղադրիչներից մեկի՝ Հայր Աստծո գաղափարը:

Ժողովրդական մտածողությամբ Աստված նաեւ լույսի խորհրդանիշ է: Հենց այդ լույսն էլ ընկած է ազատության գաղափարի հիմքում: Անհասանելիությունը եւ անբացատրելիությունը ժողովուրդը պարզապես անվանում է *լույս*՝ դրան հակադրելով խավարը: Մշո բարբառի Բուլանուխի խոսվածքում Ազատություն-Աստծուն կոչում են *Մթան լուս էրող Աստված* եւ այլն:

*Շարունակությունը՝ էջ 8*

# Եկեղեցին եւ ցեղասպանության ճանաչումը



*Սկիզբը՝ թիվ 3*

1955-ին կաթողիկոս ընտրված Վազգեն Ա Հայրապետի գլխավորությամբ Եկեղեցին քայլ առ քայլ նվաճում էր հայոց եղեռնի մասին Խորհրդային Հայաստանում հրապարակային խոսք հնչեցնելու իրավունքը:

1965 թվականին հասարակական ընդվզումների ու ճնշման տակ Հայաստանում առաջին անգամ պետականորեն նշվեց եղեռնի 50-ամյակը: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի նախաձեռնությամբ Մայր տաճարում կանգնեցվեց հուշարձան՝ «Խաչքար աղոթքի եւ ուխտի. ի հիշատակ 1915 թվի չարագործության զոհ դարձած հայերի»: 1965 թվականի ապրիլի 24-ին հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի աննախադեպ ոգեկոչումը թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում նոր լիցք հաղորդեց ազգային ինքնագիտակցությանը եւ վկայեց, որ ժամանակն ամոքում է վշտերը, բայց չի ջնջում հիշողությունը:

«Եկեղեցու շուրջ համախմբված սփյուռքահայությունը Եկեղեցու միջոցով առաջ տարավ պահանջատիրական շարժում նախ միջեկեղեցական կազմակերպությունների, ապա պետությունների մոտ: Յուրաքանչյուր պատասախանատու հոգեւորական, եթե առիթ ուներ ներկայանալու միջազգային ատյաններում, իր վրա պարտականություն էր վերցնում պաշտպանելու իր ժողովրդի շահերը»,- ասում է Տ. Տաթեւ արք. Սարգսյանը:

Միջազգային տարբեր ատյաններում Հայոց Եկեղեցին նոր աստիճանի բարձրացրեց հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման հարցը: 1983 թվականին Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը վանկուվերյան ասամբլեայում դատապարտեց 1915 թվականին Թուրքիայի իրականացրած հայերի ցեղասպանությունը եւ դիմեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին՝ այն ճանաչելու կոչով:

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը մեկ այլ հատուկ որոշմամբ կոչ արեց խորհրդի անդամ Եկեղեցիներին «դիմել իրենց երկրների կառավարություններին ճնշում գործադրելու Թուրքիայի վրա՝ հայերի ցեղասպանության փաստը ճանաչելու նպատակով»:

Հայ Առաքելական Եկեղեցու տարիների աշխատանքն իր պտուղները տվեց: Հայոց ցեղասպանության հարցը միջազգային հնչեղություն ստացավ:

Անկախության տարիներին Եկեղեցին ակտիվացրեց իր շփումները քրիստոնեական մյուս Եկեղեցիների ու այլադավան կրոնական կառույցների հետ: Մայր Աթոռ այցելած կրոնապետերը միացան ոգեկոչման աղոթքներին ու բարձրաձայն դատապարտեցին հայերի ցեղասպանությունը:

Դարի ոճրագործությունը դատապարտեց նաեւ Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապը. այն ամրագրվեց 2000 թվականի նոյեմբերին, երբ Վատիկանում երկու եկեղեցապետերը ստորագրեցին մի համաձայնագիր, որում 15 թվականին հայերի նկատմամբ կատարված ոճրագործությունը որակվեց ցեղասպանություն: Մեկ տարի անց Հովհաննես-Պողոս Բ Պապն այցելեց Ծիծեռնակաբերդ եւ իր աղոթքում հիշեց նաեւ նրանց, ովքեր նահատակվել են հավատքի համար: Սրբազան Քահանայապետի Եղեռնի հուշահամալիր այցով մեկ անգամ եւս հանրության ուշադրությունը սեւեռվեց հայոց ցեղասպանության վրա:

2005 թվականին եղեռնի զոհերի 90-ամյակի ոգեկոչման համար աշխարհի տարբեր ծայրերից Հայաստան ժամանեցին տարբեր Եկեղեցիների հարյուրավոր ներկայացուցիչներ: Նրանք քրիստոնեական եղբայրության ու միասնության ոգով աղոթեցին անմահ նահատակների համար: Եղեռնի զոհերի 90-ամյակի ոգեկոչման օրերին Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի մոտ նահատակների լույս հիշատակի համար կառուցվող մատուռի հուշաքարի օրհնության կարգ կատարեց: Արարողությանը մասնակցող Ռուս, Հույն, Ասորի, Անգլիկան Եկեղեցիների բարձրաստիճան հոգեւոր դասը հայ հոգեւորականների հետ եղբայրական աղոթք բարձրացրին առ Աստված՝ անմեղ զոհերի հանգստյան համար:

Թուրքիայի մերժողական կեցվածքի եւ պատմական փաստերի խեղաթյուրման դեմ պայքարի միջոցներից մեկը միջազգային հանրության իրազեկումն է: Արտասահմանյան հանդիպումների ժամանակ Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր հայրերը հեղինակավոր ատյաններում մշտապես բարձրացնում են ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը, անդրադառնում արդարության հաստատման անհրաժեշտությանը:

2006 թվականին, երբ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը հովվապետական այցով գտնվում էր Կ. Պոլսի Հայոց Պատրիարքությունում, հանդիպեց նաեւ թուրք լրագրողների հետ: Լրագրողի այն հարցին, թե ինչու Հայաստանը չի համաձայնում երկխոսության սեղանի շուրջ նստել Թուրքիայի հետ, Վեհափառ Հայրապետը պատասխանեց. «Մեր ժողովրդի համար ցեղասպանությունն ուսումնասիրման խնդիր չէ, դա կատարված փաստ է, որը պետք է ճանաչել: Եթե փաստը առկա է, փաստի առնչությամբ ինչ քննարկման անհրաժեշտության մասին կարող է խոսք լինել»: Վեհափառ Հայրապետի այս պատասախանը հնչեց մի երկրում, ուր ցեղասպանության մասին խոսելն անգամ հետապնդվում է օրենքով:

*Շարունակությունը՝ էջ 6*




Ոլորապտույտ հոսում է Ախուրյանը՝ ողողելով եռանկյունաձեւ սարավանդի արեւելյան եւ հարավային ափերը, հարավ-արեւմուտքում նրան է միանում արեւմտյան ափերն ակոսող փոքրիկ գետակը: Շուրջ 51 հեկտար տարածք ունեցող այս հրվանդանը երկու կողմից ձորակներով է եզերված՝ հյուսիս-արեւմուտքում Իգաձորն է, արեւմուտքում՝ Ծաղկոցաձորը, հյուսիս-արեւելքում՝ Գայլիձորը: Հրվանդանի եռանկյունաձեւ ծայրում՝ հարավային հատվածում, վեր խոյացող բարձունքը դեռեւս վաղ միջնադարում նպատակահարմար է նկատվել Միջնաբերդ կառուցելու համար: Սակայն նրանից էլ ավելի հարավ կա մի փոքրիկ բլուր, ուր կառուցված շինությունների հետքերը վկայում են դեռ հազարամյակներ առաջ տեղակայված բնակչության եւ ամրոց բնակատեղիի մասին (հայտնի է Աղջկաբերդ անունով): Ասում են, թե մի ժամանակ՝ ճշմարիտ Աստծու Միածին Որդու մարդեղացումից շատ առաջ, այստեղ երկիր էին պագանում ոսկեմայր Անահիտ դիցուհուն, որի անունից էլ ամրոցը, այնուհետ՝ քաղաքը կոչվել է Անի:

Իր պատմության ընթացքում քաղաքն ունեցել է զարգացման մի քանի փուլ՝ Կամսարականներ (4-7-րդ դդ.), Բագրատունիներ (10-11-րդ դդ.), Զաքարյաններ (13-րդ դ.). եղել են նաեւ անկման շրջաններ՝ արաբական տիրապետության (8-9-րդ դդ.), սելջուկների (11-12-րդ դդ.), մոնղոլների (13-րդ դ. կեսերից):

Որպես անառիկ ամրոց՝ Անին հիշատակված է մեր ոսկեդարյան պատմիչների կողմից (Եղիշե, Ղազար Փարպեցի): 4-րդ դ. սբ Գրիգոր Լուսավորիչը դարձի է բերում եւ մկրտում տեղի իշխանին, կառուցում եկեղեցի: Կամսարականների օրոք Միջնաբերդը ծառայել է որպես վարչատնտեսական ու պաշտամունքային կենտրոն: 8-րդ դ. վերջին՝ արաբական տիրապետությունը թոթափելուց հետո, Աշոտ Մսակեր Բագրատունի իշխանը Կամսարականներից գնում է Շիրակ գավառը, եւ քաղաքի պատմության մեջ բացվում է մի նոր էջ: Նկատի առնելով քաղաքի աշխարհագրական դիրքն ու բնականորեն պաշտպանված լինելու հարմարությունը՝ Աշոտ Գ Ողորմած արքան 961 թ. այն հռչակում է Հայաստանյայց մայրաքաղաք եւ այստեղ էլ Անանիա Ա Մոկացի կաթողիկոսի ձեռքով թագադրվում: Արքան ցանկանում էր Անի տեղափոխել նաեւ կաթողիկոսական աթոռը, որն այդ ժամանակ հարակից Արգինայում էր, սակայն պատմական այս իրադարձությունն ի կատար է ածվում Գագիկ Ա արքայի (990-1020) եւ Սարգիս Ա Սեւանցի կաթողիկոսի (992-1019) օրոք՝ 992 թ.:

Անին թշնամիների ասպատակություններից ոչ միայն բնականորեն էր պաշտպանված՝ գետերով եւ ձորակներով, այլեւ՝ ամրակուռ պարիսպներով: Ամենահները, կառուցված Կամսարակնների ժամանակ, հարավային ծայրում Աղջկաբերդի պարիսպներն էին, ապա Միջնաբերդինը՝ զատելով այն քաղաքի մնացյալ մասից: Հետագայում՝ 963-964 թթ., պարիսպներ է կառուցում Աշոտ Գ Ողորմածը Ախուրյան կիրճի եւ Ծաղկոցաձորի միջեւ եղած պարանոցով, եւ վերջինիս ու Միջնաբերդի պարիսպների միջեւ ձեւավորված հատվածը Ներքին բերդ կամ Հին քաղաք է անվանվում: Իսկ երբ Սմբատ Բ Բագրատունին քաղաքն ընդարձակում է (Նոր քաղաք), հարավային մասում կառուցվում են սմբատյան պարիսպները՝ 989 թ. (մեծ դռներ էին՝ Կարուց, Դվնո, Ավագ): Վերոնշյալներից բացի, քաղաքն ուներ նաեւ լրացուցիչ պաշտպանական կառույցներ, իսկ հարակից տարածքների հետ կապված էր քարե կամուրջներով: Բնակեցված էր քաղաքի ոչ միայն հիմնական տարածքը, այլեւ ժայռափոր արվարձանները: Այսպիսով, տարածքային առումով քաղաքին կարելի է տալ հետեւյալ բաժանումները՝ Միջնաբերդ (ներառյալ Աղջկաբերդը), Քաղաք (Հին եւ Նոր) կամ Շահաստան, Ժայռային Անի կամ Արվարձաններ եւ Ստորերկրյա Անի: Վերջինիս սկիզբը Ծաղկոցաձորից է, եւ ենթադրվում է, որ այն քաղաքը կապել է Կարսին (տե՛ս Հարությունյան Վ., Անի քաղաքը, Երեւան, 1964: Տեղանունների բառարան, Ա, 1986: Մաթեւոսյան Կ., Անի, 1997):

Հայոց հերթական մայրաքաղաքում սկսվում է մշակութային բուռն վերելք՝ եկեղեցաշեն, գիտական, արհեստագործական... Դեռեւս Կամսարականների ժամանակներից քաղաքում եկեղեցիներ են կառուցվել, որի արգասիքներից է Միջնաբերդի եկեղեցին (7-րդ դ.): Այս գործընթացը մեծ ուժով շարունակվեց Բագրատունիների, ապա՝ Զաքարյանների օրոք: Անիում գործում էր ճարտարապետական մի ողջ դպրոց: Բագրատունիների, հատկապես Գագիկ Ա արքայի տիրապետության օրոք մեկը մյուսի ետեւից վեր են խոյանում Կաթողիկե (1001 թ.), Գագկաշեն Սբ Գրիգոր (զվարթնոցատիպ, 1001-1020 թթ.), Սբ Առաքելոց (նմանությամբ Էջմիածնի Մայր տաճարի, 1031 թ.), Հովվի (10-րդ դ.), Աբուղամրենց Սբ Գրիգոր (10-րդ դ.), Փրկչի (1036 թ.), Սբ Հակոբ կամ Շուշան Պահլավունու (1037 թ.), Խամբուշենց Սբ Աստվածածին (11-րդ դ.), Կարմիր (11-րդ դ.) եւ այլուայլ եկեղեցիներ, վանքեր ու մատուռներ: Ընդհանրապես, Անիում եկեղեցիներ կառուցում էին ե՛ւ հոգեւորականները, ե՛ւ իշխանական տները: Անգամ պարիսպների բրգաձեւ աշտարակներում կային մատուռներ: «Զամենայն բրգունս եկեղեցիս յօրինեաց»,- գրում է պատմիչը (Վարդան Բարձրաբերդցի, Պատմութիւն տիեզերական, 1861, 122): Անին այնքան լեցուն էր եկեղեցիներով, որ թե՛ հայ, թե՛ օտարազգի պատմիչներն այն անվանում են հազար ու մեկ եկեղեցիների քաղաք: Այս բյուրավոր եկեղեցիներին շրջակայքից իրենց ողջույնն էին հղում Տեկորն ու Մրենը, Խծկոնքի վանքերն ու Հոռոմոսը, Բագնայրն ու Արջո Առիճը...

Եկեղեցական ճարտարապետությանը զուգընթաց ծաղկում է նաեւ որմնանկարչությունը, զարգանում վիմագրությունը. քաղաքի կյանքի մասին շատուշատ իրադարձություններ հայտնի են դարձել 100-ավոր վիմագիր արձանագրություններից: Լինելով կաթողիկոսական նստավայր՝ քաղաքը նաեւ գիտական եւ ձեռագրապահպանման խոշոր կենտրոն էր. Արգինայից տեղափոխվել էր կաթողիկոսական դիվանը, ձեռագրատներ կային Կաթողիկե, Սբ Փրկիչ, Ներքին Բերդի եկեղեցիներում, Բեխենց վանքում եւն: Պատահական չէ նաեւ, որ հենց այս միջավայրում է ծնվել առաջին հայատառ թղթե ձեռագիրը. այն կազմվել եւ գրվել է Արգինայում 981 թ.՝ ոմն Դավիթ քահանայի եւ նրա որդի Ղուկասի կողմից (ՄՄ ձեռ. 2679):

*Շարունակությունը՝ էջ 8*

Կից սենյակում

# ՄԻ՛ ԳՈՂԱՑԻՐ

## Պատվիրան ութերորդ

### Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գր. Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

*«Մի՛ խաբվեք. ...ո՛չ գողեր, ո՛չ ագահներ, ...ո՛չ էլ հափշտակողներ Աստծու արքայությունը չպիտի ժառանգեն»*

*(Ա Կորնթ. Զ 10)*

**- Տե՛ր հայր, տասնաբանյայի այս պատվիրանն արգելում է որեւէ մեկից ինչ-որ բան գողանալ, խլել կամ գաղտնի խաբեությամբ կորզել: Չղջման աղոթքի մեջ շոշափելիքի միջոցով գործվող մեղքերի շարքում նշվում է նաեւ գողությունը: Ինչո՞վ է առանձնանում այս մոլությունը մյուս մեղքերից եւ որքանո՞վ է վտանգավոր:**

- Գողությունը մեծագույն մեղք եւ մոլություն է: Այն ուրիշի ունեցվածքին տիրանալն է, բռնի կերպով հափշտակելը: Գողության տեսակները տարբեր են: Օրինակ՝ առօրյա կյանքում կատարվող կենցաղային իրերի գողությունը, կառավարման համակարգում առկա գողությունները եւ այլն: Գիտակցված է գողությունը թե ոչ, միեւնույն է, գողություն է համարվում: Հարկ է իմանալ, որ եթե անգամ գողությունը չբացահայտվեց, որեւէ մեկը չտեսավ, ապա ամենատես Աստված, Ով անքուն աչքով հսկում է մարդկանցից յուրաքանչյուրի վարքն ու կենցաղը, տեսնում է ամեն բան եւ դատաստանի է ենթարկելու: Յուրաքանչյուր մարդու մեջ կա հոգեւոր ընկալում եւ գիտակցություն, խղճի ձայն: Որքան էլ մարդու խիղճը բթացած լինի, մի օր աղաղակելու եւ հանդիմանելու է գործած սխալների համար: Գողությունը խոտելի արարք է: Գողությամբ չի կարելի ձգտել ավելիին, որովհետեւ այդ ճանապարհով ձեռք բերված ավելին չենք կարող վայելել:

**- Ինչո՞ւ, որովհետեւ խիղճը կտանջի՞, բռնվելու վախը մշտապես կհետապնդի՞ մարդուն:**

- Այո՛, քանի որ յուրաքանչյուր պատվիրանի խախտում Աստծու եւ մարդու միջեւ հակադրություն է առաջացնում: Արարիչը սիրո, խաղաղության, բարության ակունքն է, եւ եթե հակադրվում ենք Նրան, կորցնում ենք մեր խաղաղությունն ու հանգստությունը, անդադար հանդիմանվում մեր խղճի կողմից:

**- Մովսիսական օրենքը խիստ պատիժներ էր սահմանել գողերի համար. նրանք պետք է վերադարձնեին իրենց գողացածից մի քանի անգամ ավելին եւ եթե հատուցելու ոչինչ չունեին, ապա հենց իրենք պիտի վաճառվեին: Ինչո՞ւ էր այդքան խիստ պատիժ սահմանված գողերի համար:**

- Պատիժը խիստ էր, որովհետեւ հրեական միջավայրում առկա էր գողությունը, մարդիկ միմյանց չէին վստահում, որն ավելի մեծ չարիք է, քան նյութական կարողությունը: Ստեղծված իրավիճակն անհանգստացնող էր, ուստի անհրաժեշտություն կար խիստ պատիժների: Ժողովուրդն ասում է. «Ձու գողացողը ձի էլ կգողանա»: Մեզանում էլ մեծ տարածում ունի գողությունը: Ցավոք, գրեթե



չկան գողության դեպքեր, որոնք չուղեկցվեն բռնություններով, սպանություններով: Մի մեղքը ծնում է այլ մեղքեր: Ուրեմն մովսիսական օրենքի համաձայն՝ գողը քառապատիկ պիտի վճարեր, որպեսզի հասկանար, որ իր արարքով առաջին հերթին վնասում է իրեն:

**- Տե՛ր հայր, գիտենք, որ գողություն է նաեւ մարդկանց պարտքերը չտալը, նրանց արդար վաստակից զրկելը: Այսօր գողության այս տարատեսակը մեծ տարածում ունի մեզանում: Շատերն իրենց իշխանությունից ու դիրքից օգտվելով՝ ուրիշներին զրկում են նրանց արդար վաստակից, աշխատանքի դիմաց չեն վճարում կամ պակաս են վճարում, անիրավ միջոցներով հափշտակում են նրանց ունեցվածքը եւ այլն: Այս մասին ի՞նչ կասեք:**

- Մեր երկիրը մեծ ցնցում ապրեց՝ երկրաշարժ, շրջափակում, պատերազմ: Բնական է, որ հյուծված օրգանիզմի վրա ավելանում են հիվանդությունները: Շատ բարոյական չափանիշներ ոտնահարվեցին: Սակայն մինչ այդ էլ հասարակության մեջ արմատացած մի թյուր ընկալում կար՝ պետությունից գողանալը գողություն չէ: Եվ թեեւ պետական ունեցվածքի հիմքը դրվել էր անիրավ կերպով, այսինքն՝ բռնագրավվել էր մարդկանց տարիների քրտնաջան աշխատանքով ստեղծվածը, այնուամենայնիվ, դատապարտելի էր այդ մտածումը, որովհետեւ գողությունը մնում է գողություն:

Իսկ ներկա հասարակության մեջ սոցիալական բեւեռացումը մեծ չարիք է: Մեկը խիստ մեծահարուստ է, մյուսը՝ խիստ աղքատ, մեկը մտահոգված է իր կարողությունը եռապատկելու հոգսով, մյուսը զբաղված է օրվա հացը վաստակելու խնդրով: Սա մեծագույն չարիք է: Գողությամբ չէ, որ այս չարիքը պիտի վերանա: Գողությունն ատելություն է ծնում, իսկ սիրո փոխհարաբերությունը մարդկանց մեջ ամենաթանկն է: Եկեղեցին աղքատներին ու չքավորներին ուժ եւ համբերություն է ներշնչում՝ չվհատվելու, իրենց ճակատի քրտինքով աշխատելու եւ առաջ ընթանալու, իսկ մեծահարուստներին հորդորում է խոնարհվել, մշտապես հիշել, որ երկրի վրա կուտակած գանձերը չեն կարող երկինք տանել: Եվ եթե իրենց ունեցվածքը վատնեցին միայն իրենց կրքերին հագուրդ տալու համար՝ օգնության ձեռք չմեկնելով կարոտյալներին, հավիտենական կործանման պիտի դատապարտվեն: Սբ Հակոբոս առաքյալն ազդարարում է հարուստներին. «Հարուստնե՛ր, լացե՛ք եւ ողբացե՛ք այն թշվառությունների համար, որ գալու են ձեր գլխին. որովհետեւ ձեր հարստությունը փտած է, ձեր զգեստները՝ ցեցի կեր, եւ ձեր արծաթն ու ոսկին՝ ժանգոտած, եւ նրանց ժանգը ձեր դեմ որպես վկայություն պիտի լինի եւ պիտի ուտի ձեր մարմինը, ինչպես կրակը.... Զրկեցիք, սպանեցիք արդարին, որը ձեզ չէր հակառակում» (Հակ. Ե 1-6):

**- Տե՛ր հայր, գիտենք, որ գողությունը պատկանում է այն մոլությունների թվին, որոնց թողություն ստանալու համար միայն զղջումն ու խոստովանությունը բավական չեն. անհրաժեշտ է նաեւ գործով փոխհատուցում: Իսկ եթե հնարավոր չէ փոխհատուցել, ի՞նչ անել:**

- Գողություն կատարած անձը նախ պետք է զղջա, ապաշխարի իր կատարած մեղքի համար՝ հնարավորության դեպքում վերադարձնելով գողոնը: Սակայն եթե հնարավոր չէ վերադարձնել, պետք է դա անել բարեգործության, ողորմության միջոցով, որպեսզի խիղճը հանգիստ լինի: Ս. Գիրքն ասում է. «Ողորմություն տվեք, եւ ձեր ամեն ինչը մաքուր կլինի»: Հիշենք Զակքեոս մաքսավորին. նա, գողությամբ, ուրիշներին զրկելով ու նրանց ունեցվածքը հափշտակելով, լցրել էր իր տունը շատ բարիքներով: Սակայն Տիրոջ այցելությամբ նրա տունը լցվեց սրբությամբ: Զակքեոսը զղջաց՝ ասելով. «Տե՛ր, ահա իմ ինչքերի կեսը կտամ աղքատներին եւ եթե որեւէ մեկին զրկել եմ, քառապատիկ կհատուցեմ» (Ղուկ. ԺԹ 8): Եվ Հիսուսը նրան ասաց. «Այսօր այս տան համար փրկություն եղավ, ...որովհետեւ մարդու Որդին եկավ փնտրելու եւ փրկելու կորածին» (Ղուկ. ԺԹ 9-10): Ուրեմն հարկ է ոչ միայն զղջալ գործած մեղքի համար, այլեւ, ինչպես Զակքեոսը, գործով ապացուցել անկեղծ զղջումը:

**- Տե՛ր հայր, ասացիք, որ գողությունը մեզանում մեծ տարածում ունի. արդեն փոքր տարիքից շատ երեխաներ ներքաշվում են այս մեղքի մեջ՝ զբաղվելով մանր-մունր գողություններով: Ի՞նչ պատճառով է այս ախտն ի հայտ գալիս մարդու մեջ, գուցե սխալ դաստիարակությունի՞ց...**

- Ե՛վ սխալ դաստիարակությունից, ե՛ւ նյութապաշտ լինելուց, որովհետեւ շատ ընտանիքներում այսօր միակ չափանիշը նյութն է, գումարը: Այսպիսի ընտանիքներում մեծացող երեխան, բնականաբար, ավելի հակված կլինի դեպի նյութը: Սկզբնական շրջանում, ինչպես բոլոր մեղքերը, գողությունը եւս կարող է հաճելի թվալ, ճարպկություն դիտվել, սակայն դա տանում է կործանման: Այն ծնողը, որը տեսնում է իր զավակի կատարած փոքրիկ գողությունը եւ աչք է փակում, մեղմ գտնվում, նրան մղում է ավելին գործելուն: Մինչդեռ հարկ է զավակին վաղ հասակից Աստծու երկյուղով կրթել:

Հեռու մնանք գողությունից՝ կատարելով սրան հակառակ այն առաքինությունները, որ պատվիրում է մեզ Աստված՝ ողորմություն, արդարություն, առատաձեռնություն եւ այլն: Միշտ հիշենք սբ Պողոս առաքյալի սթափեցնող խոսքերը. «Մի՛ խաբվեք. ...ո՛չ գողեր, ո՛չ ագահներ, ...ո՛չ էլ հափշտակողներ Աստծու արքայությունը չպիտի ժառանգեն» (Ա Կորնթ. Զ 10):

*Հյուրընկալեց*
*Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ*

# Եկեղեցին եւ ցեղասպանության ճանաչումը



*Սկիզբը՝ էջ 5*

2007-ին, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալվեց Հռոմեակաթոլիկ Եկեղեցու Բոստոնի թեմի արքեպիսկոպոս կարդինալ Շոն Օ'Մեյլին, ներկա էին նաեւ քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, որոնց հետ Գարեգին Բ-ն խոսեց հայոց ցեղասպանության մասին: Այդ օրերին Մասաչուսեթս նահանգի Եկեղեցիների խորհուրդը ճանաչեց հայոց ցեղասպանությունը եւ աղոթեց վերապրածների հոգեկան խաղաղության համար:

Հովվապետական այցելության շրջանակներում Ամենայն Հայոց Կաթողիկոսը ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում հանդիպեց Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի փոխխոսնակ Նենսի Փելոսիի հետ: Առանձնազրույցում քննարկվեց հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում Վեհափառ Հայրապետի հնչեցրած աղոթքում կար անդրադարձ հայոց ցեղասպանությանը: «Մենք հիշում ենք հայոց ցեղասպանության զոհերին, որի հետեւանքները դեռեւս ապրում է աշխարհը՝ ցեղասպանության նորանոր դրսեւորումներով: Հանգստություն շնորհիր մարդկության դեմ գործած ոճիրների բոլոր զոհերի հոգիներին եւ նրանց հետնորդներին խաղաղություն ու արդարություն շնորհիր: Կանգնեցրու նրանց, ովքեր ոտնահարում են կյանքը, ազատությունը եւ երջանկության փնտրտուքը»:

Նույն օրը ԱՄՆ-ի Կոնգրեսի Արտաքին գործերի հանձնաժողովն ընդունեց 106 բանաձեւը, որը հնարավորություն էր տալիս հայոց ցեղասպանության հարցն ընդգրկել Կոնգրեսի օրակարգում: Սակայն Թուրքիայի հետ ունեցած քաղաքական շահն ավելի գնահատելով՝ ԱՄՆ-ի կառավարությունը թույլ չտվեց, որ հայոց ցեղասպանության ճանաչման հարցը հայտնվի Կոնգրեսի օրակարգում:

Սակայն անկախ գերտերությունների քմահաճ վերաբերմունքից՝ մեր Եկեղեցին շարունակում է բարձրաձայնել դարի ոճրագործության մասին: 2008 թվականի մայիսին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն Նորին Սրբություն Բենեդիկտոս 16-րդ Պապի հրավերով գտնվում էր Վատիկանում: Սուրբ Պետրոսի հրապարակում մեծաթիվ հավատացյալներին ուղղված Հայոց Հայրապետի ողջույնի խոսքում կար նաեւ անդրադարձ հայոց ցեղասպանությանը.

«Մենք՝ որպես Հովվապետ հայ ժողովրդի, կոչ ենք ուղղում բոլոր ազգերին ու երկրներին համընդհանուր դատապարտության արժանացնել պատմության մեջ կատարված եւ ներկայիս իրագործվող բոլոր ցեղասպանությունները, որպեսզի իշխանության կրողները անդրադառնան պատասխանատվությանը եւ հետեւանքներին այն բոլոր ոճիրների, որ գործվել եւ գործվում են Աստծո ստեղծագործության նկատմամբ, եւ որ այդ իրողությունների մերժումը նույնքան մեծ անարդարություն է, որքան իրագործված ոճիրները»: Ավելի ուշ օտարալեզու մամուլը Վեհափառ Հայրապետի այս խոսքը բնութագրեց որպես ըմբոստ մի ելույթ:

«Եկեղեցու տարած աշխատանքը բարոյական աշխատանք է, որ մեզ առաջնորդում է բարոյական հաղթանակի,- ասում է Տ. Տաթեւ արք. Սարգսյանը: Ցեղասպանության ճանաչման հարցը նաեւ բարոյական հարց է ժողովուրդների համար: Եկեղեցիներն այդ են շեշտում, որ որեւէ ժողովրդի վայել չէ ճշմարտությունն ուրանալը: Հիմա բարոյական իմաստով այդ մեծ հաղթանակը տարված է, ըստ իս, մնում է այն վերածել քաղաքական հաղթանակի»:

Քաղաքական հաղթանակը մեր ազգի, Եկեղեցու նվիրական պարտականությունն է:

Բազմաթիվ երկրներ, դրսեւորելով քաղաքական կամք, դատապարտել են 20-րդ դարի մեծ ոճրագործությունը եւ ճանաչել հայերի ցեղասպանությունը: Այս երկրների թիվը գնալով ավելանում է:

*Ալվարդ ՆԱԶԱՐՅԱՆ*



# ՈՒԽՏԱՆԵՍ

## (920/930 - 986)

Սկիզբը՝ էջ 4

Հաջորդում են Աբգարի նամակը Տիբերիոսին, պարսից արքա Արտաշեսին: Աբգարի մահից հետո Հայաստանը կառավարում են նրա Անանուն որդին՝ Եդեսիայում, եւ քեռորդի Սանատրուկը, որ հայոց զորքերի հրամանատար էր Արտազ գավառի Շավարշան քաղաքում: Վերջինս Թադեոսի քարոզչությամբ հավատքի է գալիս, ապա երկյուղից թողնում հավատը եւ սպանում Թադեոսին ու իր հավատացյալ դուստր Սանդուխտին: Բարթողոմեոսը նահատակվում է Վասպուրական նահանգի Աղբակ գավառի Արեւբոնոս (Բարմ) քաղաքում:

Ուխտանեսը պատմությունը համեմում է զրույցներով, որոնցից մեկն էլ վերաբերում է Աբգարի Անանուն որդուն: Սա Եդեսիայում Թադեոս առաքյալի տեղապահ Ադդեից խույր է պահանջում: Վերջինս մերժում է նրա անարժան գլխի համար խույր պատրաստել, քանի որ Քրիստոսին չէր երկրպագում: Թագավորի հրամանով կտրում են Ադդեի ոտքերը, եւ նա մեռնում է: Աստված պատժում է Աբգարի Անանուն որդուն՝ առնելով Ադդեի վրեժը: Ապարանքում կառուցվող սյունը, բռնողների ձեռքից դուրս է պրծնում, ընկնում նրա վրա եւ սպանում: Իսկ Սանատրուկը գրավում է նրա կալվածքները եւ վերացնում տոհմը:

Սանատրուկը, ըստ Ուխտանեսի, ոչինչ արժանի բան չունի, քան Մծբին քաղաքի կառուցումը (ըստ Բուզանդի՝ ոչ թե Մծբին, այլ Մծուրն) եւ մեռնում է որսի ժամանակ՝ նետով խոցվելով:

Հաջորդում է Երվանդի թագավորելը՝ նրան ուղեկցող զրույցով, որի աղբյուրը Խորենացին է: «Երվանդի մասին կ'ասեմ ինչ-որ ծաղրական բաներ, որ առասպելաբանելով ասում են զրույցների շարքում» (I, ԽԱ, էջ 64): Իբր Երվանդը ծնվել է մի խոշորադեմ, տգեղ ու հաստամարմին Արշակունի կնոջ խառնակությունից: Եվ ապա՝ պատմում է նրա չար աչքերի մասին հայտնի առասպելը: Նաեւ հավելում, որ սա հռոմեական Վեսպասիանոս եւ Տիտոս ինքնակալներին թողեց Միջագետքը, եւ «դրանից յետոյ Հայոց իշխանութիւնը Միջագետքից վերացաւ»:

Ըստ Ուխտանեսի՝ Արտաշեսը, որ հաղթեց ալաններին եւ կին բերեց Սաթենիկին, Սանատրուկի որդին է եւ Երվանդի հաջորդը:

Հայոց արքաների հաջորդական շարքի մեջ նա առանձնացնում է նրանց, ովքեր աչքի են ընկել քաջագործությամբ: Հակառակ դեպքում՝ արագ անցնում է: Հասնում է Խոսրով Մեծին, որի ժամանակ Հռոմում թագավորում էր Փիլիպոսը, եւ թագավորության սկզբում լրացավ Հռոմի հիմնադրման 1000 տարին: Սա իր արշավանքներով ամբողջ պարսից երկիրը «սրով մաշեց» եւ ստահրացի Սասանի որդի Արտաշիրից հանեց պարսից Արշակունիների տապալման վրեժը:

Հայտնվում է Անակը՝ պատմության ծանոթ դրվագներով:

Անակը հասնում է Թադեոսի գերեզմանի մոտ, որտեղ եղել է ապագա Գրիգոր Լուսավորչի մոր՝ Ոգուհու հղիությունը: Ապագա Լուսավորիչը կրել է Թադեոս առաքյալի շնորհները եւ շարունակել նրա ընդհատված տառապանքի ուղին: Անակի տոհմը բնաջնջելու լուրը լսելով՝ նրա հետ եկած մի պարսիկ՝ Բուրդաք անունով, Ոգուհու գրկից վերցնում է մանուկ Գրիգորին եւ տալիս իր կին Սոփիին, որն էլ դայակություն է անում: Գրիգորի մյուս եղբորը՝ Սուրենին, դայակը տանում է պարսից արքայի պալատը, որը տիրանում է իր հորը՝ Անակին, արքայի խոստացած պարգեւներին: Նա մեծանում է իր հորաքրոջ՝ Խոսրովուհու մոտ, որը հեփթաղների թագավոր Ջավանշերի որդու կինն էր: Սուրենը հետագայում դառնում է Ճենաց եւ Դարանաղյաց երկրների թագավորը եւ իշխում ինը տարի:

Խոսում է նաեւ Հակոբ կոչված Չգոնի (Հակոբ Մծբինացի) մասին՝ ասելով, որ նա ոչ թե Գրիգորի եղբայրն է, այլ հորաքրոջ որդին, որի հետ Սուրենը մեծացել էր:

Տպավորիչ է Տրդատի քաջագործությունը, որը «հունաց» Պռոբուս ինքնակալի փոխարեն, նրա իսկ արքայական հագուստներով մենամարտում է «գթաց» Հրաչյա արքայի դեմ, նրան կապում, իսկ զորքին փախուստի մատնում: Գութք, գուղք, գոթերը եղել են քոչվոր ցեղեր եւ բնակվել Սեւ ծովի հյուսիս-արեւմուտքում: Այս Հրաչյան Հակոբի քույր Սակդենիի որդին էր:

Դրանից հետո Տրդատը հունաց զորքով գալիս է իր երկիրը, քշում պարսիկներին եւ վերահաստատում հայոց խարխլված թագավորությունը:

Գրիգորն ամուսնանում է, ունենում երկու որդի, ամուսնությունից հետո, երկուստեք համաձայնությամբ, բաժանվում է կնոջից եւ ծառայության մտնում Տրդատի մոտ, երբ նա դեռեւս հռոմեացիների երկրում էր (միջանկյալ նշենք, որ Ուխտանեսը մե՛կ հռոմեացիների երկիր է ասում, մե՛կ՝ հունաց): Գրիգորը չի բացահայտում իր ով լինելը:

Չարչարանքների ժամանակ նրա ով լինելու մասին արքային լուր է տալիս Տաճատ անունով մի նախարար եւ ասում. «Դա չպետք է ապրի, որովհետեւ դա վրիժապարտի որդի է՝ որդին [է] Անակի, որն սպանեց քո հայր Խոսրովին» (I, ԿԲ, էջ 90): Այս եւ մնացած հատվածները շարադրված են ըստ Ագաթանգեղոսի:

Շատ մանրամասն վերապատմում է Գրիգորի չարչարանքները, որոնք նա ընդունում էր ուրախությամբ: Ըստ Ուխտանեսի՝ Ադամից մինչեւ Տրդատի թագավորելու 15-րդ տարին, որը նաեւ քրիստոնեության ընդունման տարին է, կազմում է 5800:

Հռիփսիմեն, որ թագավորազն էր կամ թագավորի դուստր, Հռոմից մինչեւ Դվին կտրում է 5100 մղոն ճանապարհ: Հռիփսիմյան կույսերի չարչարանքին հաջորդում է Տրդատի փոխվելը, որը Ուխտանեսն այսպես է նկարագրում. «Եւ ապա սուրբ Հռիփսիմեանների չարչարանքներից յետոյ Տրդատը նստում է իր կառքը՝ կամենալով քաղաքադռնից դուրս գալ: Եւ անմիջապէս Տիրոջ պատիժը նրան հասնելով՝ կառքից վայր գցեց, եւ նա սկսեց մոլեգնել եւ ուտել իր մարմինը եւ ուրիշ շատ հարուածներ [հասան], ինչպես ասում է Պատմագիրը [Ագաթանգեղոսը]: Նաեւ նախարարների մասին է ասում, որ նոյն հարուածներով մոլեգնեցին դեւերի կողմից...» (I, ԿԵ, էջ 93): Օտա անունով մի նախարար Խոր Վիրապից հանում է Գրիգորին, որին, նախարարների հետ մեկտեղ, ընդառաջ է գնում արքան: Վերջինս հինգ օր բազմությանը պահում է առանց սնունդի եւ լսում է միայն Գրիգորի քարոզները. «Եւ [ապա] սթափուելով ճանաչեցին նրան եւ իրենք իրենց» (I, ԿԶ, էջ 93): Դրանից հետո սահմանում են Առաջավոր (առաջին) պահքը: «Եւ երբ լրացան նաեւ միւս պահքի վաթսունհինգ օրերը, վայրենիական մորթին թափուեց թագաւորի վրայից եւ նրա դիւաբնակ միտքն [ու հոգին] բուժուեցին»,- շարունակում է պատմիչը:

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

## ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

# ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ

Ուզածդ սխրագործություն, ժուժկալություն, հնազանդություն, անշահախնդրություն, բազում գիտություններ անօգուտ են առանց խոնարհամտության: Որովհետեւ ինչպես բարիքի սկիզբն ու վերջը խոնարհամտությունն է, այդպես էլ չարիքի սկիզբն ու վերջը մեծամտությունն է: Իսկ այդ անմաքուր ոգին հնարագետ է եւ ունի բազում կերպարանքներ, այդ պատճառով էլ ամեն տեսակի ջանք օգտագործում է բոլորի հանդեպ հաղթանակ տանելու եւ յուրաքանչյուրին, ով ինչ ճանապարհով էլ որ գնում է, իր թակարդը գցելու համար: Իմաստունին որսում է իմաստությամբ, ամուրին՝ ամրությամբ, հարուստին՝ հարստությամբ, բարետեսին՝ գեղեցկությամբ, պերճախոսին՝ գեղեցիկ խոսքերով, լավ ձայն ունեցողին՝ հաճելի ձայնով, նկարչին՝ արվեստով, ճարպիկին՝ ճարպկությամբ: Եվ նմանապես չի դադարում գայթակղել նաեւ հոգեւոր կյանք վարողներին. աշխարհից հրաժարվածին՝ հրաժարմամբ, ժուժկալին՝ ժուժկալությամբ, մենակյացին՝ մենակեցությամբ, անշահախնդրին՝ անշահախնդրությամբ, գիտունին՝ գիտունությամբ, երկյուղածին՝ երկյուղածությամբ, բանիմացին՝ գիտությամբ (սակայն [հոգեւոր կյանք] վարելը միավորված է խոնարհամտության հետ): Այսպիսով՝ մեծամտությունը ջանում է բոլորի մեջ իր որոմը ցանել: Հետեւաբար, իմանալով այս կրքի կարծրությունը (որովհետեւ, որտեղ որ արագորեն արմատակալում է, անպիտան է դարձնում թե՛ մարդուն եւ թե՛ նրա ամբողջ աշխատանքը), Տերը դրան հաղթելու համար որպես միջոց մեզ տվեց խոնարհամտությունը՝ ասելով. «Երբ կատարեք այն բոլորը, որ ձեզ հրամայված է, ասացեք, թե՝ անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտավոր էինք անել, այն արեցինք» (Ղուկ. ԺԷ 10):

Ուրեմն, ինչո՞ւ ենք ինքներս մեզ ներքաշում թեթեւամտության մեջ եւ վնաս հասցնում մեր դատողությանը: Առաքյալն ասում է. «Եթե մեկը կարծում է, թե ինքը մի բան է, եւ սակայն չէ, ինքն իրեն է խաբում: Թող յուրաքանչյուր ոք կշռադատի իր գործը եւ ապա՝ ինքն իր վրա միայն պարծենա եւ ոչ թե ընկերոջ հետ համեմատվելով» (Գաղ. Զ 3-4):

Ինչո՞ւ ենք ինքներս մեզ խաբում աշխարհի նշանավոր մարդկանց պես, ովքեր միմյանց վրա մեծամտանում են եւ ստորացնում նրան, ով հեզ է: Գիտենք, որ ըստ Աստծո ուսմունքի՝ «այն, որ մարդկանց առաջ բարձր է, Աստծո առաջ զազրելի է» (Ղուկ. ԺԶ 15):

Կամ, իբրեւ ժուժկալներ, փառաբանվում ենք նրանց առջեւ, ովքեր տկար են: Կրկին առաքյալը մեզ մերկացնում է՝ ասելով. «Ոչ թե նա է ընտրյալ, ով ինքն իրեն է գովաբանում, այլ նա, ում Տերն է գովում» (Բ Կորնթ. Ժ 18):

Կամ, իբրեւ ծառայության մեջ աշխատողներ, ինքներս մեզ բարձր ենք դասում հանգիստ ապրողներից, նորից գտնում ենք, որ Աստված ավելի շատ գովում է Մարիամին, որովհետեւ «լավ մասն է ընտրել» (Ղուկ. Ժ 42):

Կամ, իբրեւ միայնակյացներ, ավելի բարձր ենք մեզ համարում նրանցից, ովքեր [վանքում] ծառայության մեջ են: Նորից գտնենք, թե Տերն ինչ է սովորեցնում՝ ասելով. «Մարդու Որդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու եւ Իր անձը տալու որպես փրկանք շատերի փոխարեն» (Մատթ. Ի 28): Այդ պատճառով ամեն կերպ պետք է փախչել մեծամտությունից:

Բայց ինքներս մեր մասին մեծ կարծիք ունե՞նք, որովհետեւ ապրում ենք անապատում եւ ավազոտ վայրերում: Սակայն մեզ ոչ մի օգուտ չի բերի վայրը, եթե մեր գործերը խոնարհամտությամբ չանենք, որովհետեւ առաքյալն ասում է, թե նայիր ոչ թե տեսանելի բաներին, այլ անտեսանելիներին, «որովհետեւ տեսանելիները ժամանակավոր են, իսկ անտեսանելիները՝ հավիտենական» (Բ Կորնթ. Դ 18):

Բայց նրանով ենք պարծենո՞ւմ, որ ապրում ենք փոսերի մեջ եւ խցերում: Այդ ամենը եսը ոչնչացնելու եւ երկրային հոգսերից ազատվելու նշաններ են: Քանի որ դու քեզ համար միջոց ընտրեցիր առաքինությունների մեջ առաջադիմելու համար, ապա թող դա քեզ համար հպարտության պատճառ չհանդիսանա: Մի նմանվիր անխելք դարբնին, ով չգիտի իր գործը եւ երկաթե կտորի փոխարեն փորձում է շիկացնել փայտը: Ուրեմն՝ ամբողջ ուժով պետք է ձգտենք պահպանել խոնարհամտությունը:

Բայց դու հարուստ ես եւ մնում ես բարեպաշտության սահմաննե՞րում: Սակայն դեռ չես հասել Աբրահամին, ով իրեն կոչեց «հող եւ մոխիր» (Ծննդ. ԺԸ 27):

Բայց քեզ վրա դրված է մարդկանց կարիքները հոգա՞լը: Մովսեսն էլ իր վրա վերցրեց ժողովրդի հոգսը: Այն բանից հետո, երբ Աստված Մովսեսի եւ Ահարոնի ձեռքով հարվածեց Եգիպտոսին եւ չորացրեց Կարմիր ծովն ու իսրայելացիներին անցկացրեց առանց թրջվելու եւ մտցրեց նրանց այդ սարսափելի անապատի մեջ, ու նրանք մոտեցան մովաբացիների սահմաններին, եւ մովաբացիները տեսան բազմաքանակ ժողովրդին, ինչպես գրված է. «Նրանք ասացին Մադիամի ծերակույտին, թե հիմա իսրայելացիները մեր շրջակայքում գտնվող ամեն ինչ լափում են այնպես, ինչպես արջառն է խժռում դաշտի դալար խոտը» (Թվոց ԻԲ 4), որովհետեւ բացի կանանցից, երեխաներից եւ ղեւտացիների ցեղից՝ կատարվեց մարդահամար. «Կատարվեց քսան տարեկան եւ ավելի բարձր տարիք ունեցող, զենք կրելու ընդունակ իսրայելացիների մարդահամար: Հաշվառման ենթարկվածների ընդհանուր թիվը կազմեց վեց հարյուր երեք հազար հինգ հարյուր հիսուն հոգի» (Թվոց Ա 45-46): Եվ այդ բոլորին ղեկավարում էր Մովսեսը: Նա, դառնալով Աստծո զրուցակիցը եւ տեսնելով Տիրոջ փառքը, չմեծամտացավ իր սրտում եւ անիրավ չգտնվեց խոնարհամտության հանդեպ: Այդ պատճառով էլ Սուրբ Գիրքը վկայում է՝ ասելով. «Մովսեսը, սակայն, շատ ավելի հեզ էր, քան երկրի վրա ապրող բոլոր մարդիկ» (Թվոց ԺԲ 3):

Բայց դու գեղեցիկ տեսք ու հզոր ուժ ունե՞ս՝ պսակված թանկարժեք գլխազարդերով: Սակայն չես հասնի Դավիթ թագավորին, ով խոնարհամտությամբ իր մասին ասաց. «Բայց ես որդ եմ եւ ոչ թե մարդ» (Սղմ. ԻԱ 7):

Բայց դու ունե՞ս գիտություն, իմաստություն եւ ժուժկալություն: Սակայն չես հասնի երեք պատանիներին եւ Դանիել մարգարեին, որոնցից մեկն ասաց. «Քոնն է, Տե՛ր, արդարությունը, եւ մերն է ամոթն այսօր մեր երեսին» (Դանիել Թ 7), մյուսներն էլ ասացին. «Կոտրված սրտով եւ տառապած հոգով թող ընդունելի լինենք» (Դանիել Գ 39):

Իսկ եթե արդարներն այդքան խոնարհություն էին ցուցաբերում, ապա որքան խոնարհ պիտի լինենք մենք՝ մեղավորներս: Որովհետեւ գոռոզանալը եւ իր մասին մեծ կարծիք ունենալը մարմնական իմաստություն է:

*Շարունակությունը՝ էջ 8*

# «ԱՍՏՎԱԾ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ



*Սկիզբը՝ էջ 4*

Ինչպես ցույց են տալիս օրինակները, մարդը եւ Արարիչն առանձին ազատ են, չեն ճնշում միմյանց: Այս պարագայում մարդ սուբյեկտն ընդունում է Արարչի աներկբայելի իշխանությունը: Ցանկացած իշխանության դեպքում ազատատենչ մարդը կարող է ընդվզել, սակայն աստվածային իշխանությունն անընդվզելի է: Բարբառային արտահայտությունները ցույց են տալիս, որ Արարիչն ու մարդը «ամեն մեկն իրեն պատկանող տիրույթում պահպանելով իշխելու իր մենաշնորհը՝ ծիածանաբար շարակարգվում են հոգու երկնակամարում» (Է. Աթայան, նույն տեղում, էջ 145):

Բերված օրինակները հաստատում են անվանի լեզվաբան-փիլիսոփայի այն համոզմունքը, որ եսակենտրոն մարդը, իր եսն ամեն ինչից գերակայող մարդ սուբյեկտը ընդունում է Արարչի աներկբայելի, անընդվզելի իշխանությունը:

Իշխանություն, որը չի սահմանափակում մարդ անհատի ազատությունը, եւ յուրաքանչյուրը՝ Աստված եւ մարդ, իր տիրույթում իշխող է:

«Աստված» բառով կազմված օրինակները աստվածճանաչողության, այսինքն՝ մարդու ազատության ձգտման վառ դրսեւորումներ են: Նման կազմություններին բարբառախոսները վերագրում են թե՛ դրական, թե՛ բացասական իմաստ: Ի դեպ, երկու դեպքում էլ հատկանիշի սաստկականություն է արտահայտվում: Այսպես՝ *Աստված սիրող* Թիֆլիսի, Արարատյան եւ այլ բարբառներում նշանակում է «բարի», մանավանդ առաքինությամբ աչքի ընկնող բարի մարդուն ասում են *աստուծո օրհնած* (Ղազախ, Նոր Նախիջեւան) եւ այլն:

*Ընտիր*, նաեւ *կանաչ* բառերը Լոռիում ունեն *Աստոծ միչին ման էկած* նկարագրական եղանակով արտահայտված հոմանիշը, ինչպես՝ *«Աստոծ միչին ման էկած դաշտ, արտ»* եւ այլն: Շատ աշխույժ երեխային ասում են *աստծու կրակ* (Արարատյան), բարի գործն արվում է *աստուծո համար* (Պոլիս), ազնվագույն մարդը բնորոշվում է *աստուծո հղեցը* (=ուղի) *վրա* (Ղարաբաղ) արտահայտությամբ: Դրան հակառակ՝ նույն բարբառում հանդիպում է *աստուծո հղեցեն տ'ուս էկած* արտահայտությունը, այսինքն՝ աստվածային ճիշտ ուղուց, ճանապարհից շեղված, որ նշանակում է «անամոթ, ամբարիշտ»: Երեւանի խոսվածքում նման մարդկանց ասում են *աստծու ահը սրտից հանած, աստծու երեսիցը թափած* եւ այլն:

«Համեստ» հասկացությանը մի շարք բարբառներում համապատասխանում է *աստուծո գառ* արտահայտությունը, «գոռոզ»-ին՝ *Աստըծուն Աստո խանչող* (Ալաշկերտ), «դաժան, անգութին»՝ *«սուրբ Աստվածն» ալ մոռցած* (Ղուլթիկ, Վան) եւ այլն:

Երեւանի բարբառում անհոգ մարդը բնորոշվում է *Աստված աղունն աղացած* արտահայտությամբ: *Աստուծո աղերսագիր տվող* նկարագրական ձեւով են պոլսեցիները բնորոշում բարձրահասակ մարդկանց:

Մարդկային թերությունները բնորոշվում են հետեւյալ արտահայտություններով՝ *աստուծո եզը* (Պոլիս)՝ «բութ», *աստուծո կովը* (Կարին, Պոլիս), *ասսու խենթը* (Սեբաստիա), *փրկիչ, փրկիչին խենթը, փրկիչին փախուկը, փրկիչ-բոլորիչ* (=փրկիչ բոլորից) (Պոլիս)՝ «հիմար, խենթ» եւ այլն: «Փրկիչ» բառով կազմված արտահայտությունները սերում են Պոլսի Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոցի անունից. այդպես ասում են նաեւ՝ *հոռոմների փրկիչը, հունաց հիվանդանոցը, փրկիչեն փախած խենթ* եւ այլն:

«Համառ» իմաստն ունեն՝ *մեռնող, մեղա աստծու չասող* (Աշտարակ, Լոռի), *օխտը գոմեշ տվող, մեղա աստծու չասող* (Շիրակ, Աշտարակ), *«ոչինչ չխնայող, ահավոր գոդին»՝ աստծու գդակը ձեռքեն գողցող* (Ղավրեժ) եւ այլն:

Դաժանությունը եւ չարությունը մի շարք բարբառներում բնորոշվում են *անաստված, աստված չունեցող* (Ախալքալաք, Պոլիս), *աստծուց չվախեցող* (Ղուլթիկ, Շիրակ, Բուլանուխ), *աստըծու կրակ* (Արարատյան, Կարին, Մուշ), *աստծո պատիժ//պատիշ* (Երեւան, Նոր Նախիջեւան, Պոլիս, Մուշ), *աստծու բեդիլք* (Չինչին) եւ այլ արտահայտություններով:

Պոլսի բարբառում թշվառությունը բնորոշվում է *Աստված ողորմիին բան* արտահայտությամբ, այսինքն՝ այնքան թշվառ, որ կարող է ողորմել միայն Աստված:

Նոր Նախիջեւանի եւ Պոլսի բարբառներում *ամայի* բառն ունի *աստուծո լեռները* հոմանիշը: Այն վայրը, որտեղ գտնվում է Աստված, անհասանելի է մարդ արարածի համար, հետեւաբար եւ ամայի է:

Քրիստոնեության հետ վերարժեւորվում է *աստված* հասկացությունը: Բազմաստվածությանը բնորոշ *աստվածներ* հոգնակի ձեւի փոխարեն հայերենում գործածական է դառնում եզակի թիվը՝ շեշտելով քրիստոնեական ուղղափառ դավանության միաստվածությունը՝ ի դեմս Հիսուս Քրիստոսի: Պոլսի բարբառում կա *աստվածները վար իջեցնել* արտահայտությունը, որ նշանակում է «մեծ-մեծ խոստումներ տալ»: Հր. Աճառյանը նշում է, որ այս դարձվածքը նախաքրիստոնեական ծագում ունի: Կարծում ենք, որ բազմաստվածության գաղափարից հրաժարումը եւ միաստվածության գաղափարի ընդունումը եւս պայմանավորված է մարդ-ազատություն հարաբերությամբ: Ազատատենչ մարդն ի վերջո չի կամենում իրենից բարձր ընդունել մի քանի աստվածների գոյությունը:

Հայերենի բարբառներում *աստված* բառով կազմվում են բազմաթիվ բառակապակցություններ, դարձվածքներ, առածներ, ասացվածքներ եւ այլն: Օրինակ՝ *Տ'ու՞՞ քյո՞ անխուն աստված սիրես* (Վան), *էն կ'ա''պու''տը* (=Աստված վկա) (Ղափան), *Աշադի բիլա* (Վան) եւ այլն:

Ա. Ղանալանյանի «Հայկական առածանի» գրքում վկայված են *աստված* բաղադրիչով արտահայտված մոտ 200 բարբառային առած եւ ասացվածք: Օրինակ՝ *Հավն որ հավ ա, օր ջուր խըմա, Աստված կիշկա* (Ալաշկերտ): *Մինակությունը Աստուն կը վայլէ* (Եվդոկիա, Սալմաստ): *Մինչեւ մարդ գաստված չըմոռնա, գիր պարտք չը մոռնա* (Բուլանուխ) եւ այլն:

Բարբառներին բնորոշ չեն Արարիչ, Փրկիչ, Բարձրյալ, երկնային Տեր եւ կրոնաեկեղեցական տերմինաբանությանը բնորոշ այլ անվանումներով կերտված կազմություններ:

**Հայկանուշ ՄԵՍՐՈՊՅԱՆ**
**Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ**

# ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ

*Սկիզբը՝ էջ 7*

Իսկ ըստ առաքյալի խոսքի՝ «եթե ըստ մարմնի ապրեք, կմեռնեք, իսկ եթե հոգով մարմնի գործերը սպանեք, կապրեք» (Հռոմ. Ը 13): Եվ հնարավոր չէ կրքերին հաղթել՝ առանց այս առաքինության մեջ առաջադիմելու:

Չե՞ս լսել արդյոք, թե բարեպաշտության համար ինչ է կրել երանելի Պողոսը: Քանզի Կորնթացիներին ուղղված թղթում գրում է. «Աբրահամի՞ սերունդ են՝ ես էլ. Քրիստոսի՞ պաշտոնյաներ են՝ ես առավե՛լ եւս: Եթե վաստակով՝ առավել, եթե գանակոծությամբ՝ առավել եւս: Հրեաներից հինգ անգամ քառասունից մեկով պակաս ծեծ կերա, երեք անգամ ձաղկվեցի. մեկ անգամ քարկոծվեցի, երեք անգամ նավաբեկության ենթարկվեցի, մեկ ցերեկ – մեկ գիշեր ծովի անդունդներում տառապեցի: Ճանապարհորդությունների ընթացքում բազում անգամ վտանգներ՝ գետերից, վտանգներ՝ քաղաքում, վտանգներ՝ անապատում, վտանգներ՝ ծովում, վտանգներ՝ սուտ եղբայրներից: Բազում անգամ եղա աշխատանքների եւ հոգնությունների մեջ՝ հաճախ անքուն մնալով, քաղցի ու ծարավի մեջ, առանց մի պատառ հացի, այլեւ ցրտի մեջ եւ մերկության» (Բ Կորնթ. ԺԱ 23-27): Կարո՞ղ ենք արդյոք համեմատվել նրա հետ: Եվ տես, թե ինչպիսին է նրա առաքինությունը, այսքան վտանգներից եւ այսքան ծառայություններից հետո նա խոնարհամտությամբ ասաց. «Եղբայրնե՛ր, ես ինքս ինձ նպատակին հասած չեմ համարում» (Փիլ. Գ 13): Պողոսն այդպես ասաց, որպեսզի հեռացնի իրենից փառաբանվելը՝ իմանալով, թե ինչպիսի բարկություն է առաջացնում դա իրեն սիրողների մոտ:

*Շարունակելի*

**Գրաբարից փոխադրեց**
**Գայանե ԹԵՐՋՅԱՆԸ**

# ԱՆԻ



*Սկիզբը՝ էջ 5*

Քաղաքամայր Անին նաեւ բազմաբնույթ արհեստների մի յուրօրինակ կենտրոն էր, ուր անգամ փողոցներն էին կոչվում ծաղկող արհեստների անուններով՝ Կոշկակարաց, Դարբնոց, Բազզնոց (կերպասագործ), Նալպանդնոց (պայտար), Փուկարանոց, Կատտնոց... Քաղաքն ունեցել է արքայական եւ իշխանական պալատներ, կուղպակներ (խանութներ), իջեւանատներ, 20-ի հասնող ձիթհանքեր եւ այլ կենցաղային շինություններ: Չմայլելի զարդաքանդակներով էին պսակված ոչ միայն եկեղեցիների ու պալատների, այլեւ ամենահասարակ տների դռներն ու պատուհանները:

Այս քաղաքն էին ձգտում նվաճել բոլոր թշնամիները: Երբ Գագիկ Բագրատունու մահվանից հետո նրա որդիների միջեւ վեճ է սկսվում, ծանրանում է երկրի ներքին վիճակը, ինչն էլ նրանց մահվանից հետո առիթ է ստեղծում բյուզանդացիների համար իրականցնել իրենց նվաճողական ծրագիրը (1045 թ.): Թագավորությունը կորցրած անեցիներին առաջնորդողը կաթողիկոս Պետրոս Գետադարձն էր եւ Պահլավունի իշխանական տոհմը: Անգամ այս իրավիճակում երկրում չի դադարում մշակութային կյանքը: Այնուհանդերձ, ստեղծված ծանր պայմանների պատճառով, 1046-ից հայոց հովվապետները (Պետրոս Գետադարձ՝ 1019-1058, Խաչիկ Բ՝ 1058-1065) այլեւս հաստատուն կերպով են չկարողանում նստել Անիում, եւ կաթողիկոսական աթոռը հանգրվանում է Կիլիկիայում: Անիում կաթողիկոսական աթոռը կրկին հաստատելու փորձ է կատարում հայրապետ Գրիգոր Վկայասերը (1066-1105). իր նստավայրն ունենալով Կիլիկիայում՝ նա Անիում իրեն աթոռակից է նշանակում Բարսեղ Ա-ին (1081-1105 թթ.՝ Անի, 1105-1113 թթ.՝ Կիլիկիա): Սակայն հայրապետի մահվանից հետո Բարսեղ Ա-ն տեղափոխվում է Կիլիկիա, իսկ Անիում հայոց կաթողիկոս չի լինում մինչեւ Բարսեղ Բ-ն:

1064 թ. Անին ընկնում է սելջուկների ծանր լծի տակ: 1124 թ. անեցիները դռները բացում են վրաց Դավիթ արքայի առաջնորդած հայ-վրացական միացյալ բանակի առաջ՝ ազատագրվելու համար սելջուկներից: Ողջ 12-րդ դ. բնորոշվում է որպես պայքարի շրջան Վրաց արքայության եւ Շեդդադյան ամիրաների միջեւ:

Քաղաքի կյանքում շրջադարձային էր 1198-1999 թ., երբ Զաքարե Զաքարյանը վերջնականապես ազատագրում է Անին Շեդդադյաններից: Սա մի հզոր հաղթանակ էր, սկիզբը նոր զարթոնքի: Նորեն վերսկսվում է եկեղեցաշեն գործունեությունը՝ արդեն իսկ Զաքարյան իշխանատոհմի գլխավորությամբ. կառուցվում են Աղշկաբերդի (հնի ավերակների տեղում), Շախմատային, վերանորոգվում Բաղտաղեկի, Սբ Առաքելոց եւ այլ եկեղեցիներ: Այս բնագավառում հատկանշական է Տիգրան Հոնենցի գործունեությունը. նրա ջանքերով են կառուցվում Սբ Գրիգոր, Սբ Կուսանաց եկեղեցիները, վերակառուցվում Բեխենց վանքը, Կաթողիկեի աստիճանները:

Գեղեցկաշեն Անիի խաղաղ կյանքը փոթորկած բյուզանդացիներն ու սելջուկները վերջը չէին. 1236 թ. հայտնվում են մոնղոլները, 1319 թ. իր ավերիչ գործն է անում երկրաշարժը, ապա՝ թուրքերը...

**Լուսինե ԹՈՒՄԱՆՅԱՆ**

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր. 03.02.2009 թ.

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**